


Մարտ 2024
N 5-6(1450-1451)

ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ

ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻԽԱՅԻԼ ԱՂԱԶԱՆՈՎ.

ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՐՈՒՄ ՄԵԾ ԱՎԱՆԴ
ԹՈՂԱԾ ՎԱՅԺԱՐ ԱՆՈՆ



Այս համարում

Իրադարձություն

| | |
|---|-------|
| ԵՊԲՀ-ին հանձնվեց միջազգային հավատարմագրման հավաստագիր | 4-5 |
| Պրոռեկտոր Լարիսա ավետիսյանը՝ «Բուժական գործ» կրթական երեք ծրագրերի հավատարմագրման մասին | 6 |
| Հայ կնոջ հոգատար ձեռքերում է ընտանիքի առողջության պահպանումը | 7 |
| Միջազգայնացման և զարգացման ուղղությունները՝ գիտական խորհրդի նիստում | 8-9 |
| Անցկացվեց կլինիկական խորհրդի նիստ | 10-11 |
| Կրեդիտավորված երկօրյա դասընթաց | 12-13 |
| «Գաջեթների սերունդ». ինչպես օգնել ծնողներին | 14-17 |
| Միջոցառում՝ նվիրված բժիշկ-ազատամարտիկ Նորայր Շահբազյանին | 18-19 |

Գիտություն

| | |
|--|-------|
| Անցկացվեց «Ուղեղի ճանաչման շաբաթը» | 20-21 |
| Ալցհեյմերի հիվանդությունը՝ «Ուղեղի ճանաչման շաբաթվա» շրջանակում | 22 |
| Միջազգային մրցույթն ամփոփեց արդյունքները | 23 |
| «Բրեյն ոփնգ» ինտելեկտուալ միջոցառում | 24 |
| Դասընթացի տեղեկատվական հանդիպում | 24 |
| Բժշկական համալսարանը՝ պալիատիվ խնամքի կրթության վերաբերյալ ծրագրի մասնակից | 25 |

Կրթություն

| | |
|--|----|
| Օտարերկրացի կլինիկական օրդինատորների զեկուցումները | 26 |
| Ամառային դպրոց՝ նախատեսված հանրային առողջության ոլորտի համար | 26 |
| Մանկաբուժական վերինարներ | 27 |
| Աշակերտների փոխանակման ծրագիր | 28 |
| 200 ուսանող՝ անոթային վիրաբուժության դասընթացի մասնակից | 29 |

Կլինիկական

| | |
|--|-------|
| Ինչ բազային հետազոտություններ է պետք անցնել զարնանը | 30 |
| Երբ այցելել նյարդաբանին. պարզաբանում է մասնագետը | 30 |
| Անցկացվեց հերթական գիտագործնական կոնֆերանսը | 31 |
| Ներդրվում է ինվազիվ առիթմոլոգիական ծառայությունը | 32-33 |
| «Մուրացանի» թիմին է միացել առաջատար վիրաբույժ Նիկոլայ Դալլաքյանը | 34 |
| Կլինիկական պրակտիկայից թեմայի քննարկում գիտագործնական կոնֆերանսում | 34 |
| Հերթական գիտագործնական կոնֆերանսը | 35 |
| «Բնածին ստոծանիական ճողվածք» թեման՝ մանկական վիրաբույժի ներկայացմամբ | 35 |
| Մարտի 8-ը՝ «Միքայելյան» համալսարանական հիվանդանոցում | 36 |
| Միջազգային օնլայն կոնֆերանս | 36 |
| Հանդիպում հանրապետության լավագույն սրտաբանների հետ | 37 |
| Մեթոդաբանական և գործնական օգնություն | 38 |

Բլից հարցազրույց

Մասնագիտության ընտրությունը և անցած ուղին Արմենակ Էնֆենջյանը ամենակարևոր ձեռքբերումն է համարում 39

Ժամանց

Խաչբառ 40

Փունջ մը ժպիտ 40

Շրջանավարտ

Շրջանավարտի հավակնոտ ծրագրերը 41

«հերացի» վերլուծական

Թերսնուցման և ճարպակալման կրկնակի բեռը 42

Երիկամների քրոնիկ հիվանդություն 43

Մարտը՝ կոլտեկտալ քաղցկեղի իրազեկման ամիս 44

Համաշխարհային առողջապահության բնագավառում աշխատում է մոտ 35 մլն մարդ 45

Սպորտ

Սպորտային նոր հաջողություններ 46

Մարզական բաց առաջնությունն ամփոփեց արդյունքները 46

Ուսանողի անկյուն

Ուսանողական Stand-up 47

Դեղագիտության մեջ չկան սահմաններ. ապագա դեղագետ Զրիստինե Պետրոսյան 47

Հետաքրքիր

Հանդիպում-գրույցների շարք՝ դպրոցներում 48

Թանգարանի հերթական հյուրերը 49

Շտրիակալական նամակ՝ հղված ԵՊԲՀ-ին 49

Ի հիշատակ

Հրաժեշտ բժշկագիտության նվիրյալին 50-51

For International students

Статьи для иноязычного читателя

52-59

ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ
APAGA BZHISHK(FUTURE DOCTOR)

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՍԵԴԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԹՈՐՈՍՅԱՆ
EDITOR- SEDA KH. TOROSYAN

Անգլերեն նյութերի պատասխանատու՝ ԱՆՆԱ ԴԵՄՈՒՐՉՅԱՆ
Համակարգչային ձևավորող՝ ՎԱՐԴՈՒՀԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ
Գրական աշխատողներ՝ ԱԻԴԱ ՀԱԿՈՒԹՅԱՆ
ՄԱՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ:
Թերթը գրանցված է ՀՀ արդարադատության նախարարությունում: Գրանցման վկայական՝ N03U990254:
Հասցեն՝ Երևան 0025, Կորյունի փ. 2: Հեռ.՝ (010) 301 000 (Ներքին՝ 2-46): E-mail: info@ysmu.am: Ծավալը՝ 60: Տպաքանակը՝ 300 օրինակ: Ասվճար:
Տպագրվում է «Անտարես» հրատարակչությունում:

Նյութերի հեղինակներ՝ Տաթևիկ Գրիգորյան, Տաթևիկ Ղազարյան,
Արփինե Թովմասյան, Ինգա Մարտինյան
Լուսանկարները՝ Մարի Գալստյանի

ԵՊԲՀ-ԻՆ ՀԱՆՁՆՎԵՑ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ



Գիտական խորհրդի նիստի ընթացքում կայացավ բժշկական համալսարանի «Բուժական գործ» եռալեզու կրթական ծրագրերի՝ NCEQE (National Center for Educational Quality Enhancement) կառույցի կողմից միջազգային հավատարմագրման հավաստագրի շնորհման հանդիսավոր արարողությունը, ինչը համախմբել էր պրոֆետորադասախոսական կազմի ներկայացուցիչներին, ապագա բժիշկներին, հյուրերին:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, WFME (World Federation for Medical Education) կազմակերպության ներկայացուցիչները, որոնք բուհի ղեկավարությանը փոխանցեցին միջազգային կարևոր այս փաստաթուղթը:

ԵՊԲՀ ղեկավար Արմեն Մուրադյանը հպարտությամբ նշեց, որ տասնյակ տարիների՝ միջազգայնացմանն ուղղված աշխատանքը սկսվել է դեռևս 1958 թվականին, և 1987 թվականից արդեն բժշկական բուհն ունեցել է օտարազգի ուսանողներ, իսկ 2000 թվականից՝

նեկտոր Վիլեն Հակոբյանի ջանքերով՝ անգլալեզու ուսուցում:

«Մենք կարողացանք ամենադժվարին, ամենակոշտ պայքարի պահին այսօր ամփոփել մեր աշխատանքը: Ինչու՞ դժվարին՝ որովհետև, երբ սկսվում էին աշխատանքները, կարծես թե միջազգային հավատարմագրման սուր անհրաժեշտություն չկար: Այսօր էլ պետք է ֆիքսել հետևյալը. մեր առջև դրված համար մեկ նպատակը որակն էր, որակյալ

բժշկական կրթություն, համագործակցություն աշխարհի բոլոր հնարավոր կրթական համալիրների հետ, որոնք ունեն ճանաչելիություն: Բժշկական համալսարանն անցել է հավաստագրման գործընթացը, աշխարհում գործող 4000 բժշկական բուհից ընդգրկվել է 400-ի մեջ, այսինքն՝ այն 10 տոկոսի մեջ է, որն աշխարհում տրամադրում է միջազգային կրթություն: Մենք ճանաչելի ենք, մեր իրականացրած ծրագրերը ճանաչելի են: Մեր շրջանավարտներն ընկալելի են իրենց ավարտական փաստաթղթով, իրենց գիտելիքներով և հմտություններով», -ասաց նա՝ համոզմունք հայտնելով, որ այդ իրադարձությունը մեծ հնարավորություններ և մարտահրավերներ է բացում շրջանավարտների առջև:

Ռեկտորի գնահատմամբ՝ Հայաստանի ապագան կրթությունն է, քանի որ պաշտպանված ժողովուրդը կրթված ժողովուրդն է, որն ունի մեծ ապագա: Այդ առումով այս համալսարանն իր պարտքն ամբողջովին կատարել է և շարունակելու է ձևավորված սկզբունքներին համահունչ աշխատանքները:

«7 տարով ստացած այս հավաստագիրը վկայում է, որ բժշկական համալսարանում առկա ծրագրերը համապատասխանում են միջազգային նորմերին, սա ունի մեծ նշանակություն թե՛ բժշկական օգնության որակի առումով, թե՛ ֆինանսական, տնտեսական, սոցիալական, դիվանագիտական գործընթացներում», - նշեց նա՝ հայտնելով, որ սեպտեմբերից կվերանայվեն ուսման վարձավճարները, 1-3-րդ կուրսերի դասախոսների աշխատավարձերը:

Վրաստանից ժամանած միջազգային փորձագետ Կոնստանտին Չոկրոպիան գոհունակությամբ նշեց. «Ուրախ եմ այսօր լինել այստեղ՝ ձեզ հետ, և շնորհավորել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանին այս մեծ հաջողության համար:

Համապատասխանեցված ընթացակարգերով այս հավատարմագրումը ճանաչված է WFME-ի (World Federation for Medical Education) կողմից: Շատ կարևոր է, որ բոլոր ընթացակարգերն անցկացվել են աշխատասիրության, բաց և թափանցիկ գործելակերպի, համակարգման սկզբունքների համաձայն: Այս որոշումը կարևոր է ոչ միայն Հայաստանի և ԵՊԲՀ-ի, այլև Վրաստանի համար, քանի որ սա առաջին միջազգային հավատարմագրումն էր, և այն հաջողություն ունեցավ: Շնորհակալ եմք նաև դրա համար: Յուրաքանչյուր հաջողության հետևում, անշուշտ, կանգնած են մարդիկ: Ցանկանում եմ երախտագիտությունս հայտնել բժշկական համալսարանի հրաշալի թիմին՝ պրոֆեսոր Արմեն Մուրադյանի ղեկավարությամբ: Դուք և Ձեր թիմն ունեք



«7 տարով ստացած այս հավաստագիրը վկայում է, որ բժշկական համալսարանում առկա ծրագրերը համապատասխանում են միջազգային նորմերին, սա ունի մեծ նշանակություն թե՛ բժշկական օգնության որակի առումով, թե՛ ֆինանսական, տնտեսական, սոցիալական, դիվանագիտական գործընթացներում», - նշեց նա՝ հայտնելով, որ սեպտեմբերից կվերանայվեն ուսման վարձավճարները, 1-3-րդ կուրսերի դասախոսների աշխատավարձերը:



դիկ: Ցանկանում եմ երախտագիտությունս հայտնել բժշկական համալսարանի հրաշալի թիմին՝ պրոֆեսոր Արմեն Մուրադյանի ղեկավարությամբ: Դուք և Ձեր թիմն ունեք

տեսլական և անպայման կհաջողվի»:

ԿԳՄՄ նախարար Ժաննա Անդրեասյանը, նախ և առաջ, իր ղեկավարած գերատեսչության անունից շնորհավորեց ներկաներին, քանի որ այդ նշանակալից իրադարձությունն, առաջին հերթին, նրա խոսքով, վկայում է մեծ թիմի՝ տարիների հետևողական աշխատանքի մասին:

«Շատ կարևոր է այս աշխատանքը նաև գնահատել, կարևոր է ստանալ աշխատանքի գնահատականն այն հավաստագրի տեսքով, որն այսօր փոխանցվեց: Առաջին հերթին ուզում եմ շնորհակալություն հայտնել հետևողական, որակյալ և անխոնջ աշխատանքի համար, որը, ինչպես միշտ, տալիս է արդյունք, և կարևոր է այս պահերին գիտակցել, որ բոլոր դժվարությունները հաղթահարվում են և տալիս են այն սպասված ցուցանիշները, որոնք առաջ են մղում համալսարանը: Իհարկե, բժշկական կրթությունը շատ սպեցիֆիկ ոլորտ է, դրա կարգավորումը տարբեր երկրներում առանձնահատուկ և լրացուցիչ ընթացակարգեր է պահանջում, հետևաբար էլ ավելի կարևոր է այն արդյունքը, որն այսօր կա, որովհետև այդ տարբերությունների և առանձնահատկությունների մեջ լինել ճանաչելի, գնահատված և ընդունված՝ նշանակում է նաև, չնայած տարբերություններին և առանձնահատկություններին, մի բան անփոփոխ է, դա որակն է, և այդ որակը ճանաչվում և ընդունվում է այն չափանիշների ու համակարգի միջոցով, որն այդքան հեղինակավոր է և որտեղ լինելը արդեն իսկ պատիվ է, հաջողություն», - ելույթում ասաց ԿԳՄՄ նախարարը՝ հավելելով, որ ՀՀ կառավարությունը մեծապես կարևորում է բժշկական համալսարանի այս ջանքերը և շարունակելու է հետևողականորեն աջակցել, որովհետև կրթության ռազմավարության կարևոր նախապայման է բուհերի որակի բարձրացումը և միջազգայնորեն մրցունակ բարձրագույն կրթություն ունենալը:

«Եվ այդ իմաստով այն ճանապարհը, որն իրականացվում է, միանշանակ ճիշտ ուղղությամբ է, և մենք էլ մեր կողմից նպաստելու ենք, որ այդ քայլերը լինեն առավել ոգևորող և տեսանելի: Այս տարվա ընթացքում առիթ ունեցա բժշկական համալսարանի կրթական գործունեությանն առնչվել որպես ծնող՝ դեռ դպրոցական մակարդակում, և շնորհակալություն եմ հայտնում հետևողական աշխատանքի համար, որը կատարվում է կրթական տարբեր մակարդակներում և որի առաջնությունն է, որպեսզի մեր երեխաները, հայ և օտարազգի ուսանողները ստանան այն կրթությունը, որը հնարավորություն է տալու ամբողջությամբ իրենց իրացնել՝ չնոռանալով, որ այդ իրացումը մի մասնագիտություն է, որից կախված է հանրային առողջությունը», - շեշտեց նախարարը:

Նա ընդգծեց, որ բարձրորակ բժշկական կրթությունը հասարակության կյանքի որակի կարևոր ցուցիչ է, որովհետև բարձրորակ բժիշկներ և բժշկական ոլորտի բարձրորակ մասնագետներ պատրաստելն, առաջին հերթին, երաշխավորում է, որ մեր հանրային առողջապահությունը և հանրային առողջությունը կարող են լինել բավարար մակարդակի՝ անհրաժեշտ բժշկական ծառայություններ մատուցելով ոչ միայն ՀՀ քաղաքացիների, այլև մեր երկիր առավել հաճախ եկող օտարերկրացիների համար:

Շնորհավորելու առիթները բազմաթիվ են, և, Ժաննա Անդրեասյանի խոսքով, պետք է ոգևորվել և մոտիվացվել հետագա աշխատանքի համար՝ ավելի մեծ բարձունքների հասնելու նպատակով:

Այսպիսով, պետք է փաստենք, որ բուհին փոխանցված հավաստագիրը վկայությունն է այն բանի, որ բժշկական համալսարանի կրթությունն ընկալելի, ընդունելի և չափելի է միջազգային դաշտում:

Նիստի ավարտից առաջ ԵՊԲՀ ռեկտոր Արմեն Մուրադյանը մեծ վաստակի, երկարամյա և անձնվեր աշխատանքի համար ԵՊԲՀ շնորհակալագրեր հանձնեց համալսարանական 6 կին ներկայացուցիչ:

«Կանայք կարողանում են ժպիտ պարզել և հնարավորություն ընձեռել՝ իրականացնելու ամենաանհավանական, ամենաբարձր նպատակները», - շեշտեց Արմեն Մուրադյանը՝ առաջարկելով իգական սեռի ներկայացուցիչներին կանանց միջազգային օրվա առիթով շնորհավորել հոտնկալս:

Հավատարմագրման գործընթացում աջակցության համար բժշկական բուհի շնորհակալագրերի արժանացավ նաև արտերկրի երեք փորձագետ:



ՊՐՈՌԵԿՏՈՐ ԼԱՐԻՍԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ «ԲՈՒԺԱԿԱՆ ԳՈՐԾ» ԿՐԹԱԿԱՆ ԵՐԵՔ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ



Ինչպես գիտեք, բժշկական համալսարանի «Բուժական գործ» անընդհատ և ինտեգրացված (հայալեզու, անգլալեզու և ռուսալեզու) երեք կրթական ծրագրերը ստացան WFME միջազգային չափորոշիչներին համապատասխան ծրագրային հավատարմագրում՝ 7 տարի ժամկետով: **«ՄԻԲ-Արմենիան» անդրադարձել է ուսանողներին տրվող հնարավորություններին:**

Ընդհանուր բժշկության ֆակուլտետի «Բուժական գործ» երեք ծրագրերը հավատարմագրվել են՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն: Այժմ Երևանի պետական բժշկական համալսարանի դիպլոմով շրջանավարտների համար ավելի հեշտ կլինի ուսումը շարունակել արտերկրում:

«Առաջին հերթին, կրթությունը համապատասխանեցվեց միջազգային չափանիշներին: Երկրորդ կարևոր ասպեկտը. այժմ մեր ուսանողներն ու դասախոսները փոխանակման ծրագրերի նոր հնարավորություններ կունենան: Մենք կարող ենք դառնալ բժշկական կրթության խոշոր արտահանող», - նշում է ԵՊԲՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լարիսա Ավետիսյանը:

Համալսարանական ծրագրում հայտնվել է նոր առարկա՝ «Հետազոտության հիմունքներ»: Ավելի շատ գործնական պարապմունքներ կան: Համալսարանն ունի երեք խոշոր հիվանդանոց: Այն համագործակցում է Հայաստանի շուրջ 30 բուժ-հաստատությունների հետ:

«Հիմա արդեն երկրորդ կուրսում կարող ենք ընտրել այն առարկաները, որոնք մեզ ավելի են հետաքրքրում: Նախկինում երկու-երեքն էին, իսկ հիմա շատ են», - նկատում է ԵՊԲՀ ուսանող Համլետ Թորոսյանը:

Միջազգային հավատարմագրումը լրացուցիչ բռնուս է արտերկրից ժամանած ուսանողների համար: Այժմ Երևանի պետական բժշկական համալսարանում ուսանողների մեկ երրորդը օտարերկրացիներ են:

«Իմ հայրենիքը շատ մոտ է, ես կարող եմ հաճախ այցելել իմ ընտանիքին: Մյուս գործոնը կրթության բարձր մակարդակն է: Դեռ չեմ որոշել՝ կմնամ, թե այլ երկիր կտեղափոխվեմ, բայց միանշանակ ուրախ եմ, որ այստեղ եմ սովորում», - ասում է իրանցի ուսանող Ալիոնեգա Մանջարը:

Համալսարանը ստացել է հավատարմագրում առավելագույն յոթ տարի ժամկետով: Այդ ընթացքում նախատեսվում է էլ ավելի բարելավել կրթության որակը:

Այժմ աշխարհում կա մոտ չորս հազար բժշկական կրթություն տրամադրող համալսարան, սակայն դրանցից միայն 10%-ն է միջազգային կրթություն տրամադրում:

Նյութի սկզբնաղբյուրը՝ <https://am.mir24.tv/news/151913>:

Իրադարձություն ՀԱՅ ԿՆՈՋ ՀՈԳԱՏԱՐ ՁԵՌՔԵՐՈՄ Է ԸՆՏԱՆԻՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Այս օրը գերեցիկ հնարավորություն է՝ երախտիքի խոսք ուղղելու կանանց ու աղջիկներին, ասելու՝ շնորհակալ ենք ձեր նվիրումի և հոգաբարության համար:

Հայ կինը դարձել է շարունակ ընտանեկան ավանդույթների իրական պահապանն է:

Խոնարհումի հասրուկ խոսք եմ հղում հայրենիքի համար կյանքը զոհաբերած մեր հայրերի, մայրերին, քույրերին, կանանց, մաղթում փոկունություն: Եղեք ամուր, առողջ:

Միտելի՛ կանայք, մեծ է ձեր դերն ու առաքելությունը Հայաստանի զարգացման գործում: Ձեր հոգաբար ձեռքերում է ընտանիքի առողջության պահպանումը:

Կանայք մեծ թիվ են կազմում նաև մեր «սպիրակ բանակում», նրանցից յուրաքանչյուրն՝ իր առաքելությանը հավատարիմ, փորձում է անել հնարավորն ու անհնարինը՝ մարդկանց պարզելու, վերադարձնելու առողջություն, հերևապես՝ ուրախ, երջանիկ կյանքի հնարավորություն:

Շնորհավորում եմ բոլոր կին բուժաշխատողներին, ասպագա բժիշկներին, ովքեր տոնական այս օրը կանցկացնեն բժշկական հասարակություններում, համալսարանական հիվանդանոցներում՝ կարտրելով մասնագիտական պարտքը:

Շնորհավորում եմ յուրաքանչյուրիդ անհատապես, մաղթում անհոգ օրեր և երջանկություն: Միշտ ժպտացեք, և թող խաղաղությունն ու հաջողությունն ուղեկից լինեն ձեզ:

ԵՊԸՀ ռեկտոր, պրոֆեսոր
ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Գիտական խորհրդի նիստի մեկնարկին ներկաները մեկ րոպե լուռությամբ հարգեցին օրեր առաջ կյանքից հեռացած կենսաքիմիայի ամբիոնի երկարամյա վարիչ, անվանի բժշկ-գիտնական Միխայիլ Աղաջանովի հիշատակը:

ԵՊԲՀ ռեկտոր **Արմեն Մուրադյանը** հայտնեց, որ առաջիկայում նումինացիոն կոմիտեի հետ կքննարկվի բժշկագիտության բնագավառում մեծ ավանդ թողած այս պայծառ անվան հավերժացումը բուհի պատմության մեջ:



«Մեծ և հազեցած օրակարգ է: Մենք միավորել ենք երկու գեկույց՝ հաշվի առնելով, որ միջազգայնացման ամբողջ գործընթացը, որն իրականացվում է բժշկական համալսարանում, պսակվել է հաջողությամբ՝ հավատարմագրման գործընթացի հավաստագրի ստացումով, այնուամենայնիվ, կարծես թե մնացել են հարցեր, որոնք պահանջում են բաց և թվային քննարկում», - ասաց ռեկտորը՝ ավելացնելով, որ վերջին տարիներին կատարվող փոփոխությունների մասին, առաջին հերթին, ցանկանում է, որ տեղյակ լինեն երիտասարդ գործընկերները:

Նա հատուկ շեշտադրեց, որ տարիների ընթացքում անդրադարձ չի եղել վճարովի ծառայությունների փոփոխություններին, մասնավորապես՝ ուսման վարձին, սակայն բոլոր բարեփոխումները կյանքի են կոչվել՝ հենց այս սկզբունքը պահպանելով, ուսման վարձի անփոփոխ լինելով: Խոսքը վերաբերում է բազմաթիվ լսարաններին, շենքային պայմաններին, սեփականությանը, նոր կենտրոններին ու ծրագրերին:

Վերջին տարիների աշխատանքը գնահատելով՝ Արմեն Մուրադյանն ընդգծեց, որ յուրաքանչյուր փորձություն՝ որպես մարտահրավեր և հետագա հաջողությունների տրամալիս է դիտարկվել, և սա է համալսարանական մեծ թիմի ամբողջական աշխատանքի սկզբունքը:

Օրակարգի առաջին հարցը գեկույցեց միջազգային գործունեության և արտա-

քին կապերի գծով պրոռեկտոր **Երվանդ Սահակյանը**:



Նա ներկայացրեց բուհի միջազգայնացման քաղաքականության հիմնական ուղղությունները և նպատակները: Անդրադառնալով օտարերկրացիների ուսուցման միջազգային վիճակագրությանը՝ պրոռեկտորը նշեց, որ առաջին հորիզոնականն արդեն կայուն կերպով զբաղեցնում են Միացյալ Նահանգները, ապա՝ Ավստրալիան, Կանադան, Չինաստանը, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Ֆրանսիան, Ճապոնիան, Ռուսաստանի Դաշնությունը և Իսպանիան:

Երվանդ Սահակյանը պատմական ակնարկի միջոցով խոսեց վերջին տասը տարվա ընթացքում ԵՊԲՀ օտարերկրացի ուսանողների դինամիկայի մասին:

«1987 թվականին բժշկական համալսարանում ուսանել է շուրջ 460 օտարերկրացի ուսանող: 2001 թվականից՝ անգլալեզու ուսուցման ներդրումից հետո, կտրուկ ավելացավ օտարերկրացի ուսանողների թիվը, և այդ աճը շարունակվում է առ այսօր: 2023-24 ուսումնական տարում համալսարանում սովորում է 2059 օտարերկրացի ուսանող», - տեղեկացրեց պրոռեկտորը՝ շեշտելով, որ ներկա պահին բժշկական համալսարանում սովորում է հանրապետության բուհերում սովորող օտարերկրացիների շուրջ 25%-ը:

Զեկույցի ընթացքում ցուցադրելով աշխարհի 25 հիմնական մասնագիտությունների ցանկը՝ ըստ երկրների, Երվանդ Սահակյանը փաստեց, որ վերջին տասը տարվա ընթացքում ամբողջ աշխարհում կտրուկ ավելացել է բժշկական և բուժքրոյրական մասնագիտությունների պահանջարկը:

Պրոռեկտորն անդրադարձավ նաև միջազգային կրթական շուկայի՝ 2017-ից սկսած արմատական փոփոխություններին՝ հատուկ շեշտելով կրթական կապիտալի համար պայքարի կոշտացումը:

Երվանդ Սահակյանն ըստ երկրներ-

րի առանձնացրեց ԵՊԲՀ օտարազգի ուսանողներին՝ 2023-24 ուսումնական տարվա տվյալների համաձայն. «Հնդկաստանի Հանրապետությունից ուսանողների թիվը 495 է (45,2%), Իրանից՝ 142 (12,9%), Հորդանանից՝ 227 (20,7%) և Շրի Լանկայից՝ 232 (21,2%): Միջազգային կրթական դաշտում տեղի ունեցող զարգացումները ցույց են տալիս, որ այս բնագավառում կայունություն ապահովելու համար անհրաժեշտ է ընդլայնել օտարերկրյա ուսանողների աշխարհագրությունը և առաջիկայում մտնել նոր կրթական շուկաներ, ինչպիսիք կարող են լինել Ինդոնեզիան, Ֆիլիպինները, Վիետնամը, Բանգլադեշը, Բուրնդը, Նեպալը, Արաբական Միացյալ Էմիրությունները»:

Նա անդրադարձավ նաև 2023 թվականի ընթացքում բժշկական բուհի ստորագրած համաձայնագրերին ու պայմանագրերին, դասախոսների և ուսանողների միջազգային շարժունության ցուցանիշներին:

Լսելով գեկույցը՝ Արմեն Մուրադյանը հատուկ շնորհակալություն հայտնեց պրոռեկտոր Երվանդ Սահակյանին՝ երկարամյա արդյունավետ և նվիրված գործունեության համար:



ԵՊԲՀ զարգացման և մարքեթինգի գծով պրոռեկտոր **Արա Ղազարյանի** տարեկան հաշվետվության առանցքում էր բուհի զարգացման հեռանկարը՝ SWOT 2018-2023 թթ. վերլուծության արդյունքում:

Այս շրջանում տեղի ունեցած ներքաղաքական մեծ շրջադարձեր, համավարակ, պատերազմ, աշխարհաքաղաքական հսկայական փոփոխություններ, դրամի արժևորում. գեկույցողը փաստեց, որ այս ընթացքում համալսարանին հաջողվեց հաղթահարել դժվարությունները և առաջընթաց գրանցել մի շարք ուղղություններում:

«Անկախ դժվարություններից՝ համալսարանը հավատարիմ մնաց որդեգրած սկզբունքներին՝ պահպանելով բարձր վարկանիշը ոչ միայն տեղական, այլև արտերկրի հարթակներում:

Սա ապացույցներից է այն բանի, որ համալսարանը հանդիսացավ խոշոր դրամաշնորհային ծրագրերի շահառու, այս ժամանակահատվածում չնվազեց օտարերկրացի քաղաքացիների հոսքը, և այս դժվարին շրջանում բուհի աշխատանքն արժանացավ Հնդկաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության բարձր գնահատանքին: Բժշկական համալսարանն ապահովում է ուսանողների համար կրթության և մասնագիտական կայացման էլ ավելի լավ պայմաններ: Զեկույցիս ընթացքում առավել մանրամասն կներկայացնեմ սիմուլյացիոն կրթությանն ուղղված ջանքերը, ԵՊԲՀ կրթության հավատարմագրմանն ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքները»,- ասաց Արա Ղազարյանը՝ շարունակելով, որ ջանքեր գործադրվեցին արտադրական ռեսուրսների ավելացմանն ուղղությամբ, այս ժամանակահատվածում ակտիվ գործարկվեց «Միքայելյան» վիրաբուժության ինստիտուտը, որը ոչ միայն նպաստեց կայուն եկամուտի ապահովմանը, այլև ուսումնական և կլինիկական գործունեության անկախությանը:

Արվյան 50/5 հասցեում տեղակայված շենքի ձեռքբերումն ամբողջացնում է համալսարանը և ավելացնում տնտեսական կայունությունը:

Բժշկական բուհի ուժեղ և թույլ կողմերին, հնարավորություններին, խնդիրներին անդրադառնալով՝ Արա Ղազարյանն ընդգծեց, որ զեկույցը կազմված է համալսարանի երեք հիմնական կառուցամասերից՝ կրթության, գիտության և կլինիկական գործունեության արդյունքում լրացումների, արտաքին ազդեցությամբ պայմանավորված հնարավորությունների և խոչընդոտների տրամաբանության մեջ:

«Այս աշխատանքն անհնար կլիներ կատարել առանց յուրաքանչյուր աշխատակցի անձնուրաց ներգրավման, և ձեռքբերումները կյանքի չէին կոչվի առանց սիրելի ուսանողների և շրջանավարտների կարևոր մասնակցության»,- հավելեց պրոռեկտոր Ղազարյանը:

Վերլուծության տվյալները հանգամանալից ներկայացնելուց հետո նա առաջարկությունների փաթեթ ներկայացրեց, որոնցից է առաջիկա տարիների ընթացքում ամբիոնների նյութատեխնիկական բազայի լավարկումը՝ արդի տեխնոլոգիաների ներդրման միջոցով:

Դրանք են միջազգային կառավարման ստանդարտների աստիճանական ներդրումը, հաջորդիվ ստումատոլոգիական, դեղագիտական կրթության հավատարմագրումը, զուգահեռաբար լաբորատոր հզորությունների լավարկումը, հետբուհական կրթության ոլորտում (ընդհանուր կամ առանձին ծրագրերի) աստիճանական հավատարմագրումը, հաշվի առնելով ՀՀ բարձրագույն կրթության 2030 թվա-

կանի ռազմավարությունը՝ միջազգային վարկանիշային սանդղակներում ներկայացվածության ապահովումը, կրթության արտահանման աշխարհագրության աստիճանական ընդլայնումը՝ ուսանողական հոսքերի դիվերսիֆիկացիան, գործուն մարքեթինգային քաղաքականության մշակումը, հետբուհական կրթական ծրագրերի շարունակական բարեփոխումները, համալսարանական կլինիկաներում ևս կառավարման համարժեք ստանդարտների ներդրումը, այլ գործոններ:

Բժշկական համալսարանի մանրէաբանության ամբիոնում նախկին երկարամյա աշխատակից, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, դոցենտ Մաքսենա Թորգոմի Հարությունյանի անվան դասախոսական վանկանակոչվի:



Հարցը գիտական խորհրդի անդամներին զեկույցեց նումինացիոն կոմիտեի նախագահ, պրոֆեսոր **Վլադիմիր Շեկոյանը**՝ տեղեկացնելով, որ «Վերադարձ» ծրագրի շրջանակում ընտանիքը ձեռնամուխ է եղել ուսումնական սենյակներից մեկի վերանորոգմանը, կահավորմանն ու տեխնիկական զինմանը:

Մաքսենա Հարությունյանին առավելապես ավագ սերունդն է հիշում, նա տասնամյակներ շարունակ աշխատել է համալսարանում, 23 տարի ղեկավարել է հասարակական մասնագիտությունների ֆակուլտետը՝ իր նպաստն ունենալով ուսանողների ուսումնառատիարակչական, այլ աշխատանքներում:

Տեսակետ հայտնեց նաև բուհի ղեկավարը՝ նշելով, որ այս ծրագրի շնորհիվ անվանի բժիշկ-գիտնականների ընտանիքների աջակցությամբ և նումինացիոն կոմիտեի առաջադրմամբ արդեն տարիներ շարունակ վերանորոգվում են մեծ լսարաններ և դասասենյակներ, և սա անվանիներին յուրահատուկ հարգանքի տուրք մատուցելու, բուհում նրանց հիշատակը վառ պահելու հնարավորություն է:

Խոսքն ուղղելով հատկապես ապագա բժիշկներին՝ պրոֆեսոր Մուրադյանը հորդորեց համալսարանական միջավայրում բուհական կյանքը լեցուն պահել թարմ գաղափարներով ու ծրագրերով, պահպանել ավագներին հարգելու

ու նրանց փայփայելու մշակույթը՝ հաշվի առնելով, որ նրանց կորուստն անդառնալի է:

Ռեկտորի տեղեկացմամբ՝ կարգապահական հանձնաժողովի նախագահի պաշտոնում պրոֆեսոր Ադաջանովին՝ որպես ժամանակավոր պաշտոնակատար, կփոխարինի դատական բժշկության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Շոթա Վարդանյանը:

«Բուժական գործ» կրթական ծրագրի միջազգային հավատարմագրման



փորձագիտական զեկույցում արձանագրված առաջարկությունների, ներքին գնահատումների արդյունքում վերհանված խնդիրների և ծրագրի հետագա բարելավման գործողությունների պլան-ժամանակացույցի հաստատման հարցը ներկայացրեց ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Լարիսա Ավետիսյանը**:

Նրա զեկույցմամբ՝ հաստատվեցին նաև ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ամփոփիչ առեստավորմանը վերաբերող կանոնակարգերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հարցերը:



«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի սովորողների վարքագծի կանոնների (ներքին կարգապահական կանոններ) փոփոխություններն ու լրացումները ներկայացրեց ռեկտորի խորհրդական **Իզաբել Աբգարյանը**:

Քննարկվեցին ընթացիկ այլ, այդ թվում ուսումնական գրականության տպագրության երաշխավորությանը վերաբերող հարցեր:

ԱՆՑԿԱՑՎԵՑ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Կլինիկական խորհրդի օրակարգը մեկնարկեց կլինիկական խորհրդի կազմի փոփոխության ներկայացմամբ և հաստատմամբ՝ ելնելով համալսարանական կլինիկաների կառուցվածքային և կադրային փոփոխություններից:

«Հերացի», «Մուրացան» և «Միքայելյան» համալսարանական հիվանդանոցների 2023-ին կատարած աշխատանքների ամփոփիչ համեմատական հաշվետվությունն էր հրավիրված նիստի օրակարգային գլխավոր հարցը:



Հաշվետվություններում ներառված թվային ցուցանիշներից, ձեռքբերումներից ու առաջիկա ծրագրերից բացի ԵՊԲՀ ռեկտոր Արմեն Մուրադյանը առաջնահերթ կարևորեց հիվանդանոցներում առկա խնդիրների ու դրանց լուծման ուղիների քննարկումը՝ ըստ ոլորտների լսելով պատասխանատուների կարծիքներն ու տեսակետները՝ համադրելով ու տալով հստակ հանձնարարականներ:

Ստացիոնար և ամբուլատոր պացիենտների թիվ, բուժման տևողություն, ֆինանսական մուտքեր, նախորդ տարի կատարված վիրահատությունների ծավալ, ներհիվանդանոցային վարակների հսկողություն, նոր սարքավորումների ձեռքբերում, ծառայությունների ստեղծում և հետագա անելիքներ. սրանք այն հիմնական թեմաներն էին, որոնք ներառված էին հիվանդանոցների գլխավոր բժիշկների զեկույցներում:

Այսպիսով, համառոտ՝ ծավալուն հաշվետվություններից.

«Հերացի» համալիրում գլխավոր բժիշկ **Արեն Բաբումյանի** փոխանցմամբ՝ հաշվետու տարվա ընթացքում հիվանդանոցային համալիրի կլինիկաներում իրականացվել է 4858 վիրահատություն,



որը 2,4%-ով կամ 114-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Վիրահատական ակտիվությունը կազմում է 78,5%: 2023-ի ընթացքում կատարվել է անգիոգրաֆիկ վիրահատարանի և ռենտգեն կաբինետի կապիտալ վերանորոգում:

Հիվանդանոցային համալիրը համալրվել է վերջին սերնդի անգիոգրաֆով, թվային ռենտգեն սարքով, 4k գերժամանակակից լապարոսկոպիկ հավաքածուով: Կրկին նորագույն սարքով համալրվելու արդյունքում առաջին անգամ ակնաբուժական կլինիկայում ներդրվել է վիրտեռոտիինալ վիրաբուժության ծառայությունը: Առաջին անգամ ուրոլոգիական կլինիկայում սկսել է իրականացվել երիկամի ավազանի և բաժակների քարերի կոնտակտային լազերային քարափշրումներ: Այս և շատ այլ հաջողությունների ու ընթացիկ աշխատանքների թվում է շտապօգնության համար նոր մուտքի ձևավորումը, ինչն առավել կոյուրի-նացնի պացիենտների մուտքը բուժհաստատություն:

«Մուրացանում» գլխավոր բժիշկ Հռիփսիմե Ապրեայանի զեկույցմամբ՝ Էնդոկրինոլոգիայի կլինիկայից անջատվել է մանկական Էնդոկրինոլոգիայի դիսպանսեր ծառայությունը, որն իրականացնում է Հայաստանում Էնդոկրին պաթոլոգիաներով երեխաների հաշվառում և հսկողություն: Լաբորատոր մասնաշենքի վթարային լինելու պատճառով կատարվել է լաբորատորիայի, դեղատան և այլ ստորաբաժանումների տեղափոխում, նոր ենթակառուցվածքների, այդ թվում՝ 3 նոր նմուշառման ծառայությունների ստեղծում: Վիզիոգրաֆը, 1 նոր սոնոգրաֆը 3 տվիչով (սվիրատվությամբ) և օրթոպանտոմոգրաֆը այն սարքավորումներն են, որոնցով համալրվել է հիվանդանոցը:

Ծավալուն շինարարական աշխատանքներ են կատարվել: Հանրապետության մասշտաբով կարևորագույն առաքելություն իրականացնող սանավիագիայի կանչերի թիվը 2022-ի համեմատ գրեթե նույն է՝ կազմելով 682: Կատարվել է 2024 վիրահատություն:

«Մուրացանում» են տեղակայված նաև մուկովիսցիդոզի հանրապետական կենտրոնը, բժշկական գենետիկայի հանրապետական, ինչպես նաև՝ մանկական թունաբանության կենտրոնները:

Բարոթերապիայի ծառայության ներդրումը հաջողություններ է գրանցել, կատարվել է 720 բարոսեանս:



Տնօրեն **Էդուարդ Բարսեղյանի** խոսքով՝ 2022-ին «Միքայելյան» հիվանդանոցում կատարվել է 4969 վիրահատություն, իսկ 2023-ին՝ 5449, 10 տոկոս աճ է արձանագրվել:

Պաթանատոմիայի կլինիկայում կատարվել է 4530 հյուսվածքաբանական հետազոտություն, 2022-ին այդ թիվը կազմել է 3034, մոտ 50 տոկոս աճ ունենք: 2023-ին կատարված աշխատանքների թվում է ինտերվենցիոն սրտաբանության բաժանմունքը՝ 11 մահճակալ կարդիոթիտով, որտեղ անգիոգրաֆը հնարավորություն է տալիս իրականացնել էնդովասկուլյար և սրտային միջամտությունների գրեթե ամբողջ սպեկտրը, այդ թվում՝ կորոնարոգրաֆիաները, ստենոսկոպիաները, էմբոլիզացիաները և այլն: Վերակենդանացման բաժինը տեղափոխվել է նոր, ավելի ընդարձակ, վերանորոգված տարածք: Բաժինը համալրվել է հիպերբարիկ օքսիգենացիայի սարքով: Ստեղծվել է ՊՇՌ լաբորատորիա: Լաբորատոր բաժնում ներդրվել է արտաքին որակի գնահատման համակարգ: Մեկնարկել է ներհիվանդանոցային

Էլեկտրոնային կառավարման համակարգի գործարկումը:



«Միքայելյան» հիվանդանոցի՝ որպես բուժաստատության բրենդային զարգացումը ակնառու է ու թռիչքային:

Արմեն Մուրադյանը մեծապես կարևորեց վիրաբուժության ինստիտուտի գիտահեն գործունեությունը՝ հաշվի առնելով, որ 261 բժիշկներից 117-ը ամբիոնական են, և առկա է չափելի գիտություն իրականացնելու մեծ ներուժ:

Նշենք, որ յուրաքանչյուր շաբաթվա վերջին համալսարանական հիվանդանոցներում բժիշկների, ամբիոնականների և կլինիկական օրդինատորների մասնակցությամբ կազմակերպվում են գիտագործնական կոնֆերանսներ՝ տարբեր արդի մասնագիտական թեմաների և ուշագրավ կլինիկական դեպքերին նվիրված:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բժիշկներ, միջին ու կրտսեր բուժաշխատողներ են միացել երեք հիվանդանոցների թիմերին: Արդի է էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման, արտերկրի կլինիկաների հետ համագործակցության սերտացման, այլ հարցերը:

Ռեկտորը շեշտադրեց, որ ԵՊԲՀ կազմում գործող հիվանդանոցներում, բուժական ծավալների բարելավումից զատ, խիստ կարևոր է համալսարանական բժշկական կազմակերպություններում ուսումնական և գիտական ուղղությունների առաջնությունը, մասնագետների վերապատրաստումը, ինչպես նաև՝ շարունակական մասնագիտական զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը:

«Բուժօգնության որակը համալսարանական բոլոր հիվանդանոցներում առաջնահերթություն է, առավել ևս երբ այն վերաբերում է երեխաներին», - ընդգծեց նա՝ հե-

տաքրքրվելով «Մուրացան» համալսարանական հիվանդանոցում մանկաբուժական դպրոցի ստեղծմամբ:

Հոփսիմե Ապրեսյանի գնահատմամբ՝ իրականացվող նախաձեռնությունները կհանգեցնեն նրան, որ վաղվա մանկաբույժը, մանկաբույժների նոր սերունդը իր ապագան տեսնի հենց այս մանկական հիվանդանոցում: Որոշ ծառայությունների միավորումները «Մուրացանում» ևս միտված են որակի բարձրացմանն ու ծախսերի օպտիմալացմանը:



Կլինիկական աշխատանքների գծով պրոռեկտոր **Արմեն Մինասյանը**, որպես բժշկական համալսարանի կլինիկական աշխատանքները համակարգող, շնորհակալություն հայտնեց ոլորտի ներկայացուցիչներին քրտնաջան աշխատանքի համար:



Մի շարք ընթացիկ հարցեր ու խնդիրներ պրոռեկտոր Մինասյանի անմիջական ղեկավարմամբ լուծումներ են ստանում ամեն շաբաթանց կազմվող գործակարգավարական, աշխատանքային հանդիպումներում:

Ամփոփելով նիստը՝ Արմեն Մուրադյանը շնորհակալություն հայտնեց համալսարանական երեք համալիրների բուժաշխատողներին կատարած մեծ ծավալի, վիթխարի և մարդասիրական, ակադեմիական բնույթի աշխատանքի համար:

«Սկսած պրոռեկտորից, որը



հսկայական աշխատանք է իրականացնում և մեծ պատասխանատվություն կրում, մինչև անձնակազմի կրտսեր գործընկերներ, որոնք իրականում աննկատ, ամեն օր ազնվագույն և մարդասիրական սխրանքներ են կատարում: Այսօր խոսեցինք խնդրահարույց կողմերի, աշխատանքային հարցերի մասին, համոզված եմ, որ այս խստապահանջությունը միմիայն ի նպաստ կլինի այն մեծ աշխատանքին, որը դուք իրականացնում եք: Հպարտություն եմ ապրում, որ ձեզնից մեկն եմ, աշխատում եմ ձեզ հետ, և երբ խոսում եմ համալսարանական հիվանդանոցների մասին, անկախ հանգամանքներից, բացի հպարտությունից՝ որևէ զգացում չի առաջացել: Աշխատանքները իրականացնելիս մենք պետք է նպաստենք, որ ավելին իրականացվի նաև հաջորդիվ եկող սերունդների կողմից, մեզնից լավը պատրաստելը պետք է լինի համալսարանական հիվանդանոցների հիմքում: Կլինիկական խորհրդի նիստը առիթ է ասելու, որ այս աշխատանքը ծայրահեղ կարևոր է ինչպես մեր երկրի, այնպես էլ ժողովրդի համար: Մենք բոլոր տեսակի իրադարձություններից դուրս, բայց և բազմաթիվ իրադարձությունների արդյունքում ձևավորված խնդիրների պատասխանատուն ենք: Շարունակենք նույն կերպ, շարունակել և շտկել բոլոր այն հարցերը, որոնք բարձրացվեցին՝ նպաստելով համալսարանի և աստվածահաճո գործունեությանը», - եզրափակելով շեշտեց պրոֆեսոր Մուրադյանը:

ԿՐԵՒԻՏԱՎՈՐՎԱԾ ԵՐԿՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑ

Բժշկական համալսարանում մեկնարկեց «Վարակիչ հիվանդությունների հետազոտական կանխարգելում» թեմայով կրեդիտավորված երկօրյա դասընթացը, որի ընթացքում մասնագետների կողմից անդրադարձ կատարվեց մի շարք խնդիրների, որոնք իրենց արդիականությունը շարունակում են պահպանել:



Դասընթացի ընթացքում զեկուցումներով հանդես եկան «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի գլխավոր բժիշկ, բուքսային բաժանմունքի ղեկավար, ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի դասախոս Հռիփսիմե Ապրեսյանը և համաճարակաբանության ամբիոնի դասախոս Նաիրա Մելքոնյանը: Դասընթացի հիմնական նպատակն էր բարձրացնել բուժաշխատողների տեղեկացվածությունը վարակիչ հիվանդությունների հետազոտական կանխարգելման վերաբերյալ:

Կարմրուկ, ջրծաղիկ, մենինգակոկային վարակ, կապույտ հազ, դիֆթերիա, հեմոֆիլոսային Բ վարակ. այս հիվանդությունները դասընթացի առաջին օրը վիրաբույժների, փնսկաբանների, գինեկոլոգների, համաճարակաբանների, վարակաբանների, մանկաբույժների, ընտանեկան բժիշկների, միջին բուժանձնակազմի ուշադրության կենտրոնում էին:

Հռիփսիմե Ապրեսյանը, ներկայացնելով զեկուցման առաջին թեման, շեշտեց կարմրուկի ընդհանուր դրոյթները, կլինիկական պատկերը, վարակելիությունը, ախտանշանները:



«Կարմրուկը փոխանցվում է օդակաթիլային եղանակով, ունի չափազանց բարձր վարակելիություն: Հիմնական

ախտանշաններն են տենդ, ցավ, հարբուխ, հաչոցանման, չոր, կպչուն հազ, շնային կամ շնաթարախային արտադրություն: Պարտադիր ախտանշան է համարվում կոնյունկտիվիտը», - ընդգծեց Հռիփսիմե Ապրեսյանը՝ խոսելով նաև բարդությունների և բուժման առանձնահատկությունների մասին:

Շարունակելով խոսել կարմրուկի համաճարակաբանական առանձնահատկությունների և աշխարհում տիրող համաճարակաբանական իրավիճակի մասին՝ Նաիրա Մելքոնյանն ընդգծեց. «Վերջին տարիներին կարմրուկի համաճարակաբանական իրավիճակը բավականին լարված է: Համաճարակաբանական առանձնահատկություններից կարելի է առանձնացնել վիրուսի բարձր վերարտադրական ցուցանիշը, որը կազմում է 16, սա երկրորդային դեպքերի թիվն է, այսինքն՝ 1 մարդը կարող է վարակել 16 անձի: Ռիսկի խմբում են մինչև 5 տարեկան երեխաները, հղիները և ընկճված իմունիտետով անձինք»:

Դասընթացի երկրորդ թեման ջրծաղիկն էր, որը հանգամանալից ներկայացրեց Հռիփսիմե Ապրեսյանը: «Մենք գիտենք, որ նույն վիրուսը՝ VZV, կարող է հարուցել երկու հիվանդություն՝ ջրծաղիկ և գոտևորող որքին: Այս հիվանդությունը նույնքան վարակիչ են, որքան ջրծաղիկ ունեցողները, ուստի մեկուսացումը պահպանվում է: Վիրուսի ամենամեծ քանակությունն առկա է բշտիկի պարունակության մեջ: Հիվանդությունը սկսվում է սուր, ցավային համախտանիշով, ցանավորմամբ, ամենահաճախ ախտահարվող նյարդերը միջկողային նյարդերն են», - նշեց ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի դասախոսը՝ ներկայացնելով կլինիկական դեպքեր:

Նաիրա Մելքոնյանը խոսեց Հայաստանում ջրծաղիկի դեպքերի աճի մասին, մասնավորապես՝ 2008-2022 թվականներին գրանցված, անդրադարձավ կանխարգելմանը՝ շեշտելով, որ իրականացվում են կանխարգելման պլանային և համաճարակաբանական ցուցումով պատվաստումները, ինչն անչափ կարևոր է:

Հազեցած օրվա հաջորդ թեման դիֆթերիան էր: «Դիֆթերիայի վարակի աղբյուրը կարող է լինել թե՛ հիվանդը, թե՛ կրողը, պատվաստումը չի կանխում կրությունը, այսինքն՝ մարդիկ, եթե պատվաստված են, կարող են լինել կրողներ: Բկանցքի դիֆթերիան սկսվում է բկանցքի ցավով, բայց դիֆթերիայի առանձնահատկությունն այն է, որ ինչքան խորանում է պրոցեսը, այնքան ցավային զգացողությունը նվազում է: Ախտանշաններից են դժվարացած կլման ակտը, ջերմությունը, բկանցքում փառը, բնորոշ է նաև ճար-

պաբջանքի այտուցը պարանոցի շրջանում, ունենում ենք ավշահանգույցների մեծացում», - նշեց Հռիփսիմե Ապրեսյանը՝ խոսելով նաև մաշկի, քթի և այլ դիֆթերիայի մասին:

Զեկուցողները ներկայացրին կապույտ հազի վարակելիության և վիճակագրության մանրամասները՝ խոսելով հիվանդության առանձնահատկությունների մասին:

«Կապույտ հազը երկարատև հիվանդություն է՝ ի տարբերություն մյուս վարակների, որոնք մեկ-երկու շաբաթ են տևում, այս վարակի ժամանակ հիվանդությունը երկարատև է, կարող է տևել երեք ամիս: Կապույտ հազը սուր վարակիչ հիվանդություն է, որը հիմնականում ախտահարում է վաղ մանկական հասակում, սակայն կարող է վարակվել ցանկացած տարիքային խումբ: Հիմնական բնութագրական ախտանիշը սպազմատիկ նոպայաձև հազն է, որը, որպես կանոն, ավարտվում է ռեպրեզիվով, փսխմամբ», - ընդգծեց Հռիփսիմե Ապրեսյանը՝ հավելելով, որ վարակի աղբյուր են հանդիսանում արդեն վարակված մարդիկ և ատիպիկ ընթացքով, չախտորոշված, սակայն վարակակիր անձինք, որոնք հասարակության մեջ պտտվում են և չունեն որևէ լուրջ ախտանիշ:

Հաջորդիվ ներկայացվեցին այլ վա-



րակիչ հիվանդություններ, կլինիկական դեպքեր, խոսվեց կանխարգելման կարևորության մասին: Աղիքային որոշ վարակներ քննարկվեցին «Հերացի» վերլուծական կենտրոնի ղեկավար, համաճարակաբանության ամբիոնի վարիչ Մերի Տեր-Ստեփանյանի և ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի դոցենտ Ալվարդ Հովհաննիսյանի կողմից:

Երկօրյա դասընթացի շրջանակում մասնագետներն անդրադարձան նաև կատաղություն, փայտացում, վիրուսային հեպատիտ Բ, վիրուսային հեպատիտ Ը, ՄԻԱՎ, սիֆիլիս վարակային հիվանդություններին:

Երկրորդ օրվա դասընթացի ընթացքում զեկուցումներով հանդես եկան «Հերացի» վերլուծական կենտրոնի ղեկավար, համաճարակաբանության ամբիոնի վարիչ Մերի Տեր-Ստեփանյանը, ինֆեկցիոն հիվանդությունների ամբիո-

նի դոցենտ Ալվարդ Հովհաննիսյանը և ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի ասիստենտ Լուսինե Հարությունյանը:



Դասընթացի առաջին թեմային անդրադառնալով՝ ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի դոցենտ Ալվարդ Հովհաննիսյանը նշեց, որ կատաղության ռիսկի գործոնը բարձր է Հայաստանում, և պետք է այդ հարցին լուծում տալ: «Կատաղության առաջնային կլինիկական ախտանշաններն են թուլությունը, դիսկոմֆորտը, գլխացավը, ջերմության բարձրացումը, վերքի՝ կծածի շրջանում կարող է լինել քոր, ձգվածության զգացողություն, ապասկավում են հիմնական կլինիկական նշանները՝ հիդրոֆոբիա, ֆոտոֆոբիա, ցանկացած ազդակից գերզգրվածություն: Առաջանում են մկանային կծկումներ, որից հետո պարալիտիկ փուլ, գալիս է մի պահ, որ պացիենտի մոտ



դիտվում է լավացում, բայց, ցավոք, դա կեղծ է, և 3-7 օր անց դիտվում է պացիենտի մահ»,- ընդգծեց դոցենտը՝ ներկայացնելով կլինիկական դեպքեր:

«Կատաղությունն այն վարակն է, որը պահանջում է հետազոտակային կանխարգելում: Այն մահաբեր հիվանդություն է՝ բացառությամբ որոշ դեպքերի»,- նշեց համաճարակաբանության ամբիոնի վարիչ Մերի Տեր-Ստեփանյանը՝ ընդգծելով, որ վարակի աղբյուր են հանդիսանում հիմնականում շները, սակայն ցանկացած վայրի կենդանու կողմից կծված վերք ունենալու դեպքում, այդ թվում՝ անգամ կատուների և առնետների, պետք է իրականացնել կատաղության հետազոտակային կանխարգելում:

Նրա խոսքով՝ կծած վերք ունենալու դեպքում անհրաժեշտ է կատարել վա-

ցում օճառով և ջրով, դրանից հետո յոգի խիտ լուծույթով խիտ մշակել վերքի եզրերը, կծած վերքը կարելն արգելվում է, քանի որ անաէրոբ պայմաններ են ստեղծվում:

Ալվարդ Հովհաննիսյանը, ներկայացնելով հաջորդ թեման, ընդգծեց, որ փայտացումը սուր ինֆեկցիոն հիվանդություն է ծանր ընթացքով, ախտահարում է կենտրոնական նյարդային համակարգի շարժողական կենտրոնները, առաջացնում մկանային լարվածություն՝ տոնիկ-կլոնիկ ցնցումների տեսքով: Ախտանշաններից առաջինը տրիզմ է, ինչի պատճառով հիվանդը չի կարողանում բացել բերանը: Այսուհետև հաջորդեց կլինիկական դեպքի ներկայացում:

«Տարբեր իրավիճակներում մենք առնչվում ենք փայտացման հետ: Հարուցիչները կենդանիների աղիքներից դուրս են գալիս հող, հողում սպորավորվում, երկար պահպանվում և անցնում են հողով կեղտոտված ցանկացած իրից, պարտադիր չէ, որ մենք ունենանք անմիջական շփում հողի հետ, վերքային մակերեսի միջոցով հարուցիչ ներթափանցումը կարող է հանգեցնել փայտացման»,- ընդգծեց Մերի Տեր-Ստեփանյանը՝ անդրադառնալով նաև նորածնային փայտացմանը. «Մենք գերծ չենք արտահիվանդանոցային ծնունդներից, երբ չի իրականացվում հետազոտակային կանխարգելում և երեխայի մոտ կարող է զարգանալ փայտացում»:

Մասնագետի խոսքով, սակայն, Հայաստանում փայտացման դեպքերի աճը համեմատած քիչ է:

Դասընթացի հաջորդ թեման հեպատիտ Բ-ն էր. «Վարակ՝ ասեղի ծայրին, անտեսանելի, արյան միջոցով փոխանցվող վարակ, ինֆեկցիոն հիվանդություն, որը փոխանցվում է գաղտնի շրջանի սկզբից, ոչ վաղ անցյալում վարակված պացիենտն առանց կլինիկական դրսևորման կարող է լինել վարակի աղբյուր: Պատվաստումն ապահովում է 20 տարուց ավելի իմունիտետ»,- նշեց «Հեռացի» վերլուծական կենտրոնի ղեկավարը:

Վարակը փոխանցվում է արյան միջոցով, այն իրերը, որոնք կարող են արյունով բաղաբերվել անգամ կենցաղում, ինչպես ատամի խոզանակը, սափրման պարագաները և այլն, կարող են դառնալ վարակի փոխանցման գործոն: Հեպատիտ Բ-ն փոխանցվում է նաև սեռական ճանապարհով, ինչպես նաև բժշկական և էսթետիկ ինվազիվ միջամտությունների դեպքում՝ ոչ պատշաճ մանրէազերծված գործիքների միջոցով, վարակը անցնում է նաև մորից պտղին:

Ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի ասիստենտ Լուսինե Հարությունյանը, իր պրակտիկայից ներկայացնելով կլինիկական դեպք, ընդգծեց, որ հեպատիտ Բ-ն կարող է ունենալ սուր և քրոնիկ ընթացք:

«Սուր հեպատիտը հաճախ անախտանիչ է, քրոնիկ փուլում հիվանդները տարիներ անց են հայտնաբերվում: Հեպատիտ Բ-ն կարող է հանգեցնել քրոնիկ հեպատիտի, լյարդի ցիռոզի, հեպատոցելյուլար կարցինոմայի զարգացման: Ստատիստիկ տվյալներով հեպատոցելյուլար կարցինոմա հաստատված պացիենտների 45 տոկոսի մոտ պատճառը հանդիսանում է հեպատիտ Բ-ն»,- նշեց Լուսինե Հարությունյանը՝ խոսելով բուժման առանձնահատկոթ-



յունների մասին, որի նպատակը լյարդի ցիռոզի, հեպատոցելյուլար կարցինոմայի զարգացման և այլ բարդությունների կանխարգելումն է:

«Հեպատիտ Բ-ն կանխարգելելի վարակ է, իսկ հեպատիտ Ց-ն՝ բուժվող: Հեպատիտ Ց-ի գաղտնի շրջանը տարբեր է, այն կարող է ձգվել տարիներով՝ կախված օրգանիզմից, վարակի աղբյուրից, փոխանցման մեխանիզմից: Այս հիվանդության համար պատվաստանյութ չկա, չունի հետազոտակային կանխարգելում, եթե պացիենտի մոտ հաստատվել է հեպատիտ Ց և բուժաշխատողը վստասվել է նրա կենսահեղուկով, անհրաժեշտ է տեղային ոչ սպեցիֆիկ միջոցառումների իրականացում հարուցիչ ներթափանցումը կանխելու նպատակով ու հետազոտվելը մեկ տարվա ընթացքում»- խոսելով հեպատիտ Ց վարակի մասին՝ ասաց Մերի Տեր-Ստեփանյանը:



Մասնագետները մանրակրկտորեն անդրադարձան նաև ՄԻԱՎ և սիֆիլիս վարակիչ հիվանդություններին՝ կրկին խոսելով ռիսկի գործոնների, փոխանցման եղանակների, հետազոտակային կանխարգելման կարևորության մասին:

«ԳԱԶԵԹՆԵՐԻ ՍԵՐՈՒՄ».

ԻՆՉՊԵՍ ՕԳՆԵԼ ԾՆՈՂՆԵՐԻՆ



Վերջերս քննարկվեց և օրակարգային թեմա դարձավ «Թվային հիգիենա, գաջեթներ, կախվածություն. հոգեբանական և ախտաբանական ազդեցությունը մանկական և դեռահասային տարիքում» թեման:

Գուցե լսել էք անանուն մեջբերումը. «**Բոլորն էլ զհտեն, թե ինչպես երեխաներ մեծացնել, բացառությամբ նրանց, ովքեր ունեն**»: Այսպիսով, եթե դուք ունեք երեխաներ, ապա փորձեք ապացուցել հակառակը և ձեր երեխաներին պաշտպանեք թվային սարքերի ավելորդ օգտագործումից:

Հնարավորինս ավելացրեք կենդանի շփումը ընտանիքում և թույլ մի տվեք, որ ձեր երեխան դառնա թվային դեմենցիայի զոհ:

Այս առիթով էլ բժշկական համալսարանում մեկնարկվեց «Թվային հիգիենա, գաջեթներ, կախվածություն. հոգեբանական և ախտաբանական ազդեցությունը մանկական և դեռահասային տարիքում: Սեռական դաստիարակություն» թեմայով կրեդիտավորված համաժողովը:

Գաղտնիք չէ, որ թվային սարքերի ստեղծումից ի վեր սկիզբ է դրվել մի նոր ժամանակաշրջան, երբ առավել դյուրին է դարձել հաղորդակցվելը, տեղեկատվության փոխանցումը, նոր տեղեկատվության հասանելիությունը, և, ընդհանուր առմամբ, մարդու կենսակերպը կտրուկ հեղաշրջվել է: Այս շրջանում ձևավորվել է մի նոր սերունդ՝ Z սերունդը, որը անվանում են նաև Gen Z կամ Zoomers, կազմված՝ 1997 թվականից հետո ծնված երիտասարդներից և երեխաներից:

Այս երիտասարդները մեծացել են տեխնոլոգիայով շրջապատված, բայց այն, թե ինչպես են նրանք օգտագործում թվային տեխնոլոգիաները՝ հաճախ անհասկանալի և անընդունելի է ավագ սերնդի համար, ինչը երբեմն հանդիսանում է սերունդների բախման շարժառիթ, այսպես կոչված՝ «հայրերի և որդիների խնդիր» մեր օրերում:

Թվային վարքագծի հետ կապված առողջական խնդիրները չեն սահմանափակվում միայն խաղային խանգարումներով, այլ առաջ են բերում տարբեր առողջական խնդիրներ՝ տեսողական, հենաշարժական, հոգեկայրաբանական և այլն (2014 թվական, ԱՀԿ): Այսօր երեխաների գրեթե 75%-ը ննջասենյակներում օգտագործում է թվային սարքեր: Մինչդեռ՝ թվային տեխնոլոգիայի չափից ավելի օգտագործման հետևանքով առաջանում են նոր վտանգներ՝ խանգարվում է մտավոր և ֆիզիկական զարգացումը, առաջանում է տագնապի, անհանգստության զգացում, սովորելու և քնի, սեռական դաստիարակության և վարքագծի խանգարումներ: Թվային սարքերի գերօգտագործումը նյարդաբանական առումով գրեթե նույնն է, ինչ «թվային թմրանյութի» կիրառումը:

Թվային սարքերի գերօգտագործումը նյարդաբանական առումով գրեթե նույնն է, ինչ «թվային թմրանյութի» կիրառումը:

Վերջին տարիներին առողջապահական կազմակերպությունները սահմանում են էկրանային ժամանակի նորմեր և ուղեցույցներ երեխաների և դեռահասների համար, և այդ ուղեցույցները շարունակում են զարգանալ՝ հետազոտությունների և տեխնոլոգիական առաջընթացի հետ մեկտեղ:

Ամերիկյան մանկաբուժության ակադեմիան (AAP), օրինակ, առաջին անգամ ուղեցույցներ է հրապարակել երեխաների համար թվային տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ 1999 թվականին՝ խորհուրդ տալով 2 տարեկանից բարձր երեխաներին օրական ոչ ավելի, քան 2 ժամ էկրանին նայել, իսկ մինչև 2 տարեկան երեխաներին՝ միայն վիդեոգրույցի համար: Այս ուղեցույցները թարմացվել են 2016 թվականին՝ ընդգծելով որակյալ բովանդակության և ծնողների ներգրավվածության կարևորությունը, չկենտրոնանալով բացառապես ժամանակային սահմանափակումների վրա: 6 և ավելի բարձր տարիքի երեխաների համար ԱՄՆ մանկաբույժների ակադեմիան խորհուրդ է տալիս մշտապես սահմանափակումներ դնել մեդիա օգտագործելու ժամանակի վրա և համոզվել, որ էկրանի ժամանակը չի խանգարում բավարար քնին, ֆիզիկական ակտիվությանը և առողջությանը:

5-17 տարեկան երեխաներին և դեռահասներին ԱՀԿ-ն խորհուրդ է տալիս օրական առավագն 60 րոպե չափավոր և ինտենսիվ ֆիզիկական գործունեություն ծավալել և սահմանափակել նստակյաց էկրանի ժամանակը՝ ներառյալ հեռուստացույց դիտելը, համակարգչային խաղեր խաղալը և սմարթֆոններ ու այլ էլեկտրոնային սարքեր օգտագործելը:

Ռուսաստանի առողջապահության նախարարության կողմից մշակված սանիտարական նորմերի համաձայն՝ դպրոցականների էկրանային ժամանակը սահմանափակվում է տարրական դպրոցում մինչև 15 րոպե, միջին դպրոցում՝ 20-25 րոպե, ավագ դպրոցում՝ առաջին դասին մինչև 30 րոպե, 2րդ դասին մինչև 25 րոպե տևողությամբ:

ՀՀ-ում, ըստ առողջապահության նախարարի հրամանի, երեխաների և դեռահասների



համար սահմանափակումները վերաբերում են դասերի (պարապմունքների) ժամանակ էլեկտրոնային հաշվիչ մեքենաներով անմիջական աշխատանքի տևողությանը: 6 տարեկան սովորողների համար սահմանվել է 10 րոպե, իսկ 15-18 տարեկան սովորողների համար՝ 20-30 րոպե:

Առանձին հետազոտությունները փաստում են, որ 2019-21 թվականների ընթացքում օրական միջին էկրանային ժամանակը դեռահասների շրջանում 4:44 ժամից հասել է 5:33-ի, իսկ պատանիների շրջանում՝ 7:22-ից 8:39-ի, սա առավելագույն աճն է, որը գրեթե կրկնակի գերազանցում է նախորդ չորս տարիների ցուցանիշները:

Համաժողովը նախագահում էին «Հերացի» վերլուծական կենտրոնի ղեկավար, համաճարակաբանության ամբիոնի վարիչ Մերի Տեր-Ստեփանյանը և ախտաֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ Արտեմ Գրիգորյանը:

Միջոցառումը նախաձեռնած և կազմակերպած պրոֆեսոր Մերի Տեր-Ստեփանյանը շեշտեց, որ հրավիրված հերթական քննարկումը հայտարարված ծնողակրթության տարվա շրջանակում է, և մասնակիցները փորձելու են քննարկվող թեմայի շուրջ պարզաբանել դրական և բացասական կողմերը, բացահայտել ախտաբանական ազդեցությունը, գսպել հետևանքները:

ԵՊՀՀ ռեկտոր Արմեն Մուրադյանը նշեց, որ թվային տեխնոլոգիաները մեր կյանքի անխուսափելի և անբաժան մասն են, և երեխաները առավելագույնս ներգրավված են այս պրոցեսի մեջ:

«Զարգացած երկրներում երեխաների վերաբերյալ համապատասխան նորմատիվ ակտեր են ընդունված, թե ինչքան ժամանակ և ինչ կոնտենտ կարող են երեխաների համար հասանելի լինել: Թվային աշխարհի դրական կողմերը մենք դժվար թե կարողանանք այսօր բացահայտել, քանի որ այն մեծ հնարավորություններ ունի, բայց վտանգները, որոնք կապված են առողջության հետ, պետք է քննարկել մասնագիտական հարթակներում: «Հերացի վերլուծականը» նախաձեռնել է այս շարքը՝ առաջնահերթությունը տալով երեխաների և դեռահասների առողջությանը: Անշուշտ, այս հարցը նաև մեծերին է վերաբերում, որովհետև բոլորս տեսնում ենք, որ ներգրավվածությունը՝ նորածիններից սկսած մինչև խորը ծերության տարիներ, կարիք ունի ինչ-որ կանոնակարգերի»,- ողջունելով այս հարցերով մտահոգվողներին՝ ռեկտորը համոզմունք հայտնեց, որ նախաձեռնությունը պետք է դառնա համընդհանուր:

«Մեր ջանքերը կպսակվեն հաջողությամբ, հատկապես, եթե ծնողը հասկանա, թե ինչպիսի խնդիրների հետ է առնչվում իր երեխայի առողջությունը, թե ինչպիսի վտանգներ են առաջանում՝ սկսած տեսողությունից մինչև նրա մենտալ ձևավորումը, ֆիզիկական առողջությունը, սոցիոմի մեջ նրա ներգրավվածությունը, այսինքն՝ բոլոր ուղղություններով կան վտանգներ, որոնք իր հետ բերում է թվային աշխարհը»:

«Գաջեթների սերունդ. երեխաների առողջության պահպանման հիմնախնդիրները» թեմայով զեկույցով հանդես եկավ հիգիենայի և էկոլոգիայի ամբիոնի ավագ դասախոս Արմինե Ասլանյանը:

«Գաջեթների սերունդ. երեխաներ և դեռահասներ, ովքեր երբեք չեն ճանաչել աշխարհն առանց գաջեթների, պլանշետների և մշտական կապի: Թվային սարքերը և համացանցը նրանց կրթությունը, շփումը և ժամանցն ապահովող հիմնական գործիքներն են, ինչը մեզ՝ մեծահասակներին, և հատկապես բժիշկներին մոտ առաջացնում է մտահոգություն առողջության և բարեկեցության վրա դրանց հնարավոր ազդեցության վերաբերյալ: Մենք ապրում ենք տեղեկատվության վրա հիմնված հարաբերությունների դարաշրջանում, և անհնար է մեր կյանքը պատկերացնել առանց ժամանակակից տեխնոլոգիաների, սակայն տեխնոլոգիական առաջընթացը բերել է խնդիրներ և մարտահրավերներ, որոնց հետ չի կարելի հաշվի չնստել: Էկրանի առջև անցկացված ավելորդ ժամանակը, ըստ տարբեր երկրներում արված հետազոտությունների, կարող է բերել մի շարք բացասական հետևանքների՝ հոգեբանական և ֆիզիկական առողջության խանգարումների, սոցիալական վարքագծի խանգարման, հավելյալ քաշի և գիրության, քնի, տեսողության, կեցվածքի խանգարումների, ինչպես նաև՝ առաջադիմության անկման, խաղային կախվածության», -մանրամասնեց նա՝ հավելելով, որ ժամանակակից աշխարհը թելադրում է քնի կանոններ, անքնությունը դարձել է շատ մարդկանց գիշերային ուղեկիցը՝ այդ թվում, ցավոք, նաև երեխաների և դեռահասների մոտ: Էկրաններն արձակում են կապույտ լույս, որը կարող է ճնշել մեղաթոնիսի արտադրությունը և խաթարել մարմնի քուն-արթմնի բնական ռիթմը՝ դժվարացնելով քնելը: Գրավիչ խաղերը և հաղորդումները կարող են խթանել ուղեղի աշխատանքը և դժ-



վարացնել երեխաների՝ քնելու համար նպաստավոր հանգստի ռեժիմի անցնելը:

Մանկաբուժության թիվ 1 ամբիոնի ասիստենտ Աննա Մխիթարյանը խոսեց «Գաջեթ-կախյալ մանկություն» թեմայի շուրջ: Էկրանին հայտնվեցին պատկերներ. երեխաները բնության գրկում ժամանակ անցկացնելիս, խաղալիս, անհոգ մանկության կադրեր, ծնողների հետ գրքի ընթերցանություն, սա, զեկուցողի բնորոշմամբ, առավելապես նախկին ժամանակներին էր բնորոշ:



Այսօր այս պատկերներին փոխարինում են հեռուստացույցը, գաջեթները, այլ տեխնոլոգիաներ: Մեծագույն խնդիրն ու կարևոր հարցադրումն այն է, թե, արդյոք, գաջեթների առկայությունը լավ է, թե՛ վատ:

Առցանց շոփինգը, տանը նստած աշխարհի տարբեր ծայրերից հեղինակավոր մասնագետների դասախոսություններ լսելը 21-րդ դարում հրաշալի հնարավորություններ են ստեղծում:

Արհեստական բանականության գործիքներն ու նորաստեղծ ռոբոտները, որոնք երեխաների մեջ դեպի կրթությունը, արվեստը սեր սերմանելու համար են, չնայած տեխնոլոգիաների առաջընթացին, անխուսափելի խնդիրների, թվային տեխնոլոգիաներից կախվածության են

հանգեցնում:

Փաստացի, մանկաբուժական տեսակետից տուժել է երեխաների սնուցման պրոցեսը, քանի որ, էկրաններին նայելով, համաձայն մեջբերվող տվյալների, նվազում է երեխայի սննդի ընդունման քանակը, երեխան ավելի վատ է ծամում, այլ գործոններ, որոնք կախվածություն են ձևավորում փոքր հասակից, մինչդեռ նախկինում ճաշ կամ ընթրիքը ընտանիքի միավորման ժամ էին համարվում»:



Երիտասարդ մասնագետն անդրադարձավ նաև գաջեթների և գիրության, ավելորդ քաշի ավելացմանը, ոչ ցենզուրային խոսելաճին: Մանկաբույժների խորհուրդներն ու ծնողներին ուղղված հորդորները քիչ չեն: Ցանկալի է խոսել երեխայի հետ այն նյութի մասին, որը նա դիտում է, քննարկել ու հետաքրքրվել նրան հետաքրքրող բովանդակությամբ, կրթել:

Անհնար է թերագնահատել ժամանակակից գաջեթների ազդեցությունը երեխաների և դեռահասների տեսողական համակարգի վրա: Հենց սա էր այն նյութը, որը մատուցեց լսարանին ԵՊԲՀ մանկական ակնաբուժության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, «Հերացի» համալսարանական հիվանդանոցի ակնաբուժության կլինիկայի ղեկավար Ահարոն Գաբրիելյանը:

«Ինչպես բոլորս տեսնում ենք, ժամանակակից աշխարհը բավականին մեծ պահանջներ է ներկայացնում բոլորիս, ընտանիքի յուրաքանչյուր անդամի: Այսօր ընտանիքներում բոլորը զբաղված են, հարց է առաջանում՝ ինչո՞վ. լուրեր, հետաքրքիր ֆիլմեր, մուլտֆիլմեր: Եվ այս ամենը մեր գիտակցությանը փոխանցում է մեր տեսողական օրգանը, որն անալիզատոր է և թույլ է տալիս ստանալ ինֆորմացիայի մեծ տոկոսը»,-

ասաց նա՝ առաջնահերթ համարելով երեխաների տեսողական առողջության պահպանումը:

Համալսարանականը մանրամասն զեկուցեց տեսողական օրգանի զարգացման փուլերի մասին, դրանց վրա գաջեթների ազդեցության, աչքերի թվային կախվածության կամ համակարգչային համախտանիշի մասին:

Ահարոն Գաբրիելյանի խորհուրդն էր կիրառել 20-20 կանոնը, այսինքն՝ 20 րոպե էկրանի դիմաց լինելուց հետո 20 վայրկյան հանգստացնել աչքերը: Նա կարևորեց նաև երեխաների կանխարգելիչ այցերը ակնաբույժի՝ համապատասխան տարիքում:

Հնչող հարցերին ու տեսակետներին արձագանքեց ԵՊԲՀ ռեկտոր Արմեն Մուրադյանը՝ շեշտելով այն հիմնական գաղափարը, որ, անկախ մեր ցանկությունից, թվային տեխնոլոգիաների մուտքը մեր կյանք անխուսափելի է, համատարած զարգացումը հեռանկարային է և պետք է ընտրել ոչ թե արգելքի, այլ կանոնակարգման, կառավարելի պահելու, սահմանափակելու ճանապարհը:

Մասնագիտական դաշտում, նրա բնորոշմամբ, առաջանում է «թվային առողջաբերություն» տերմինը:

Գաջեթների վնասների, վտանգների ու ռիսկերի մասին բարձրաձայնելը, համապատասխան վերահսկման մեխանիզմներ մշակելը տարբեր նեղ մասնագիտացում ունեցող բժիշկների, ծնողների ուշադրության կենտրոնում պետք է լինի:

«Կախվածությունը՝ դեռահասի աչքերով» զեկույցի շրջանակում բժշկական հոգեբանության ամբիոնի դասախոս Նաիրա Ազատյանն անդրադարձավ թվային կախվածությանը նպաստող գործոններին՝ դրանց թվում առանձնացնելով.

- մեծահասակների և հասակակիցների հետ շփման բացակայությունը,
- սթրեսը,
- ընտանեկան միջավայրը՝ ծնողների ուշադրության և ջերմության բացակայությունը,



- սոցիալական դժվարությունները,
- ցածր ինքնագնահատականը,
- նոր և հետաքրքիր փորձի ձեռքբերման ցանկությունը դեռահասների մոտ,
- հավանության կարիքը. հասակակիցներին նմանակումը, բոլորին նման լինելու ցանկությունը:

Մասնագետը թվարկեց այն իրավիճակները, որոնք կարող են վկայել դեռահասների մոտ թվային կախվածության առկայության մասին:

Նաիրա Ազատյանը նշեց որոշակի խորհուրդներ, որոնք կօգնեն ծնողներին՝ հնարավորինս նվազեցնել թվային կախվածության հետևանքները.

- բացահայտ հաղորդակցվել,
- խրախուսել օֆլայն գործունեությունը,
- առաջարկել այլընտրանքային հաղթահարման ռազմավարություն,
- սահմանել ծնողական վերահսկողություն:

Բժշկական հոգեբանության ամբիոնի դասախոս Անահիտ Տեր-Ստեփանյանի գեկույցը վերաբերում էր թվային կախվածության հոգեբանական հետևանքներին: Սահմանելով, թե ինչ է նոմոֆոբիան, դրա ախտանշանները և դրսևորումները՝ մասնագետը շեշտեց, որ այն համարվում է 21-րդ դարի հիվանդություն: Անահիտ Տեր-Ստեփանյանը կոնկրետ դեպքերի ներկայացմամբ և վերլուծությամբ ընդգծեց խնդրի կարևորությունը: Նա առանձնացրեց գաջեթներից կախվածության կանխարգելման և դրա հաղթահարման միջոցները.

գիտակցել գաջեթներից կախվածության խնդիրը, վերլուծել և հասկանալ, թե որ պատճառներն են ընկած կախվածության հիմքում,

անհրաժեշտ հետաքրքրություն ցուցաբերել երեխայի հույզերի, կարիքների, հետաքրքրությունների հանդեպ, դատարկությունը լրացնել ոգեշնչող և հետաքրքիր զբաղվածությամբ,

աշխատել ինքնագնահատականի և ադապտացիայի ճգնաժամի հետ: Համալսարանական մասնագետը մատնանշեց նաև ծնողի կողմից անցանկալի գործողությունների շարքը: Ինչ չի կարելի անել.

որպես պատժամիջոց գրկել երեխային գաջեթից, որպես խրախուսանք լավ վարքի համար թույլատրել երեխային ավելի շատ ժամանակ անցկացնել գաջեթով,

անտարբերության մատնել երեխայի՝ գաջեթներից օգտվելու ժամանակը և օգտվող ռեսուրսների բովանդակությունը:

Հաջորդիվ հոգեբուժության ամբիոնի դոցենտ Մարգարիտ Թադևոսյանը ներկայացրեց «Գաջեթները և դեռահասների հոգեկան առողջությունը» վերստառությամբ գեկույցը: Մեքսսպաթոլոգիայի կուրսի վարիչի պաշտոնակատար Վրեժ Շահրամանյանն անդրադարձավ սեռական դաստիարակության դերին սեռական խանգարումների գենեզում: Բժիշկ Շահրամանյանի կողմից ներկայացվող թեմաները մշտապես մեծ հետաքրքրություն են առաջացնում լսարանի շրջանում, դառնում հարցադրումների, քննարկումների նյութ: «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի» որակի մենեջեր Ռուզաննա Հարությունյանը ներկայացրեց «Երևան քաղաքի 10-14 տարեկան երեխաների շրջանում համացանցային խաղերով պայմանավորված վարքային դրսևորումները» թեմայով գեկույցը:

Նյարդաբանության ամբիոնի ավագ դասախոս Լիլիթ Գալստյանի գեկույցը վերաբերում էր գաջեթների կողմնակի ազդեցությանը երեխաների ճանաչողական հմտությունների վրա և երեխաների շրջանում տեխնոլոգիաներից կախվածության նյարդահոգեբանական ազդեցությանը:

Հոգեբուժության ամբիոնի ասիստենտ Անի Հովհաննիսյանը ներկայացրեց «Գաջեթների դերը տազնապային և դեպրեսիվ խանգարումների դեպքում» խորագրով գեկույցը:

Զեկույցողները կարևորեցին հանրության, ծնողների իրազեկվածության բարձրացումը գաջեթների վնասների մասին, ինչին և ուղղված էր համաժողովը:



ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԲԺԻՇԿ-ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ ՆՈՐԱՅՐ ՇԱՀԲԱԶՅԱՆԻՆ



Կարճամետրաժ ֆիլմի դիտմամբ Ջինվորի տանը մեկնարկեց բժիշկ-ազատամարտիկ Նորայր Շահբազյանին նվիրված միջոցառումը, որը համախմբեց նրա համախոհներին, մարտական ընկերներին, համալսարանականներին, ընտանիքի անդամներին:

«Այսօր մենք հարգանքի տուրք ենք մատուցում մեծ մարդու, բժշկի, հայրենասերի, ով իր ամբողջ գործունեությամբ կարողացավ ևս մեկ անգամ ապացուցել, որ յուրաքանչյուր բժիշկ մարդ է, որը ռազմի դաշտում հայրենասեր գիևվոր էր, իսկ թիկունքում՝ գթասեր բժիշկ: Այդ ոգով մենք փորձում ենք կերտել մեր ռազմական բժիշկներին, բժշկական անձնակազմը՝ անկախ նրանց մասնագիտական ձևավորումից, հավատարիմ մնալով այդ սկզբունքներին՝ Ջինվորի տանը հնչող յուրաքանչյուր խոսք ունի բացառիկ հուսալի քաշ», - ասաց ԵՊԲՀ ռեկտոր Արմեն Մուրադյանը:

Նորայր Շահբազյանը Արցախյան 3 պատերազմների մասնակից էր, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր, պահեստագործի սպա՝ կապիտանի կոչումով:



2020 թվականին համավարակը խլեց բժիշկ Նորայր Շահբազյանի կյանքը: «Դուկտոր»․ այսպես էին նրան դիմում ռազմի դաշտում: Շահբազյանը դեռ 90-ականներին կամավոր էր մեկնել պատերազմ:

«Լինելով բժշկական համալսարանի շրջանավարտ՝ երեք պատերազմների մասնակից դարձավ, կամավորական շարժման մասնակից լինելով՝ որպես բժիշկ փրկեց բազմաթիվ կյանքեր և անմասն չմնաց հայրենիքի պաշտպանության գործում: Նման օրինակները, այստեղ հնչող անունները յուրաքանչյուր երիտասարդի համար, անկախ նրանց մասնագիտական կողմնորոշումից, տարիքից պետք է դառնան հստակ ուղենիշներ», - ընդգծեց ռեկտորը՝ հավելելով, որ որպես հերացիական Նորայր Շահբազյանը հավատարիմ մնաց գթասիրտ բժշկի կերպարին և երբեք չմոռացավ, որ բժիշկը կյանքերի ու առողջության պաշտպան է, ամեն ոք բաժին հասած պահին պետք է արժանի լինի այն տղաներին, ում անու-

նով Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոնում անվանակոչվել են սենյակներ, ինչպես նաև համապատասխանի այդ կերպարներին, համամարդկային արժեքներին:



Բժշկական բուհի, ներկաների հավաստմամբ՝ դոկտոր Շահբազյանը անուն էր, որը հպարտություն բերեց հայ ժողովրդին և համալսարանին:

«Մարդը կա այնքան ժամանակ, որքան նրան հիշում են», - այս համոզմունքը վերահաստատելով՝ իր խոսքը ներկաներին հղեց ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լարիսա Ավետիսյանը:

«Պատիվ եմ ունեցել ծանոթանալ դոկտորի հետ Արցախյան առաջին պատերազմի տարիներին, կնոջ՝ Օֆելյայի միջոցով: Այսօրվա նման հիշում եմ բոլոր հանդիպումները մարտական ընկերների հետ, որտեղ քննարկվում էր հայրենիքի պաշտպանության բազմաթիվ հարցեր, և այդ քննարկումների կենտրոնում հենց դոկտորն էր, որտեղ ցուցաբերում էր ոչ թե բժշկի արժանի հատկությունները, այլև, ի զարմանս ինձ, մեծ գի-

տակ էր մարտական գործողությունների, փայլուն, խորքային գիտեր հայ ժողովրդի պատմությունը: Ունենալով կոտ տրամաբանություն և վերլուծական բացառիկ ունակություններ՝ միշտ մասնակից էր լինում այն որոշումների կայացմանը, որոնք անպայման հետո պետք է հաջողեին: Նրան դոկտոր կոչելը ոչ թե պայմանավորված է նրա բժիշկ լինելով, այլ նրանով, որ ամենահաս էր, հասնում էր բոլորին, երեխաներին, բարեկամներին, հարազատներին, ընկերներին՝ հնարավոր և անհնար իրավիճակներում», - շեշտեց Լարիսա Ավետիսյանը՝ կյանքից հեռացած գործընկերոջը բնորոշելով որպես լավ ընկեր ու բարեկամ:



«Այս որակներով էր պայմանավորված, որ երբ լսեցինք երեք պատերազմներ անցած մարդու մահվան բոթը՝ բոլորիս մոտ մի քանի անպատասխան հարցեր էին՝ ինչու՞, ինչպե՞ս կարող էր նման բան պատահել, և, իհարկե, հազար ափսոսանքի խոսքեր», - ավելացրեց նա՝ հավաստելով, որ Նորայր Շահբազյանին հաճախ են հիշում և հիշելու:

Ռազմաբժշկական կրթական կենտրոնի ղեկավար, ռազմադաշտային

թերապիայի ամբիոնի պրոֆեսոր Սամվել Գալստյանը ևս հիշում ու գնահատում է բժիշկ Շահբազյանի դերը ռազմաբժշկության պատմության մեջ՝ նրան իսկական նվիրյալի օրինակ համարելով:

«Բժիշկ Նորայրի հետ առաջին անգամ հանդիպել եմ 2012 թվականի աշնանը, հետո այդ հանդիպումները դարձան հաճախակի: Գաղափարը, որ պետք է ունենալ մի միջավայր, որտեղ պետք է ցուցադրվեն ռազմի դաշտում բժիշկների կատարած սխրանքները, հետագայում ամբողջականացվեց: Ցանկացած որոշում առանց գործողությունների անհմաստ է դառնում, ես տեսա, թե ինչպես բժիշկ Նորիկն ամեն ինչ անում էր՝ ստեղծելու ներկայիս գործող թանգարանը: Ավելի ուշ, երբ ռեկտորի կողմից խնդիր դրվեց ստեղծել բոլոր պատերազմներին նվիրված ռազմաբժշկությանն առնչվող թանգարան, նրա այդ գաղափարը իրականություն դարձավ: Նորայր Շահբազյանն այն անձն է, որն իր մեջ ամբողջականացնելով բժշկի և զինվորականի կերպարը՝ կարողացավ ներշնչել, տարածել, ուղղորդել այդ գաղափարը մարդկանց, ռազմական բժիշկների շրջանում: Դոկտոր Նորիկի մասին կարելի է խոսել անվերջ, նա մինչև կյանքի վերջը պայքարեց, որ ունենանք մեր Հայաստանը: Հայ ժողովուրդը ինչպես միշտ մաքառման ճանապարհին շատ բաներ կորցրել է, շատ բաներ էլ գտել: Բազմաթիվ երկրներ կան, որ ուժեղ են ֆիզիկապես, բայց հոգեպես շատ թույլ են: Մենք ունենք այն, ինչ նրանք չունեն, մենք ունենք բժիշկ Նորայր, ունենք և ունենալու ենք»:

Նորայր Շահբազյանի մարտական ընկեր, Հանրապետական հիվանդանոցի առաջատար վիրաբույժ, բժիշկ-ագատամարտիկ Արմինա Նալբանդյանը, խոսելով ռազմաբժշկի մասին, փաստեց, որ նրան ճանաչում է 1991 թվականից.

«60 տարին քիչ է մարդու համար, բայց յուրաքանչյուր մարդ այդ 60 տարին փնտրում է՝ ինչպես պետք է ապրի: Մենք նրա 60-ամյակը նշում ենք հետմահու, բայց նա մեզ հետ է: Ցավալի է, բայց իրողություն: Պետք է այդ մարդկանց մասին հիշողությունը վառ պահվի, ոչ թե տրվի մոռացության, բոլորին շնորհակալ եմ, որ այդ հիշողությունը պահում են: Ես չեմ կարծում, որ մեր

ընկերները գոհվել են, պայքարել են, կռվել են անհմաստ, ո՛չ, ամեն ինչ ունեցել է իմաստ: Հուսով եմ, որ ոչ միայն մեր, այլև ապագա սերունդների հիշողություններում այս կյանքերը որպես ճրագ մշտապես լույս կտան»:

Միջոցառման հանդիսավոր մասը եզրափակելով՝ Արմեն Մուրադյանը նշեց, որ մեծանուն հայերին նվիրված հիշատակի միջոցառումները շարունակական են լինելու՝ երբեք չնոռանալով այդ վառ անհատներին:

Զինվորի տանը հրավիրված այս միջոցառումը յուրահատուկ երախտիքի, ակնածանքի խոսք էր անժամանակ կյանքից հեռացած բժիշկ Նորայրի հիշատակին, ում 60-ամյա հոբելյանն է այս տարի:

Ման հերոսական անուններն են կերտում մեր պատմությունը՝ խորը հպարտության զգացում առաջացնելով:

Միջոցառումը վարում էր ռազմաբժշկական ֆակուլտետի 1-ին կուրսի կուրսանտ Հարություն Օհանյանը:

Նշենք, որ 2022 թվականին Զինվորի տուն վերականգնողական կենտրոնում բացվեց բժիշկ-ագատամարտիկ Նորայր Շահբազյանի անվան լաբորատորիա:

Բժիշկ Նորայրն ու տիկին Օֆելյա Գրիգորյանը, ով ԵՊԲՀ ռազմաբժշկական կրթագիտական կենտրոնում հրավիրված մասնագետ է, ծանոթացել են մարտի դաշտում, որտեղ վերջինս եղել է և՛ լրագրող, և՛ գրության քույր: Ամուսնացել են Արցախյան ազատամարտից հետո, ունեն երկու դուստր:

Տիկին Օֆելյան այսօր մեծ սիրով ու նվիրումով բժշկական բուհի թանգարանի ռազմական սրահում, որը հագեցվել է ռազմաբժշկական ֆակուլտետի ջանքերով, և որտեղ ներկայացված ցուցանմուշները վերաբերում են ինչպես Հայրենական Մեծ, Արցախյան առաջին, այնպես էլ քառօրյա, 44-օրյա պատերազմներին, վարում է դպրոցականների, ուսանողների, ռազմական բժշկության պատմությամբ հետաքրքրվողների համար նախատեսված ռազմահայրենասիրական շեշտադրմամբ այցեր՝ արթուն պահելով ինչպես ամուսնու, այնպես էլ հանուն հայրենիքի անմահացածների հիշատակը:



ԱՆՑԿԱՑՎԵՑ «ՈՐՂԵՂԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՇԱԲԱԹԸ»



Բժշկական մայր բուհում Decoding Mind's Chemical Symphony («Միասին վերձանենք մտքի քիմիական սիմֆոնիան») խորագրի ներքո մեկնարկեց ԵՊԲՀ ուսանողական գիտական ընկերության թիմի կողմից կազմակերպված «Ուղեղի ճանաչման շաբաթ» ինֆորմատիվ միջոցառումների շարքը:

Միջոցառումը հնարավորություն ընձեռեց ներդրող գիտությամբ հետաքրքրված ուսանողներին ծանոթանալ ներդրությանամիտներնեին և նրանց գործող մեխանիզմներին: Համալսարանական մասնագետների դասախոսությունների շտրիիվ մասնակիցները ծանոթացան ուղեղին, նաև վիրտուալ իրականության (VR-ի) միջոցով կարողացան խորասուզվել ուղեղի մեջ, մասնակցել ինտելեկտուալ խաղերի և շահել մրցանակներ:

Միջոցառումների մեկնարկն ազդարարեց ԵՊԲՀ գիտության գծով պրոռեկտոր Կոնստանտին Եսկոյանը՝ ողջունելով և հաջողություններ մատթելով ներկաներին:

«Սա հերթական առիթն է մեզ՝ որպես համալսարան, որպես այս ոլորտի մասնագետներ, ձեզ՝ որպես ուսանողական հանրույթ, աշխարհին ներկայանալ պատկառելի տեսքով: Սա բոլորիս ձեռքբերումն է: Շատ ուրախ եմ, որ մենք ունենք ավելի լայն հարթակներ և հուսով եմ, որ տարեց-տարի կունենանք գիտության շուրջ ձևավորվող թե՛ ֆունդամենտալ, թե՛ կլինիկական ավելի լայն հնարավորություններ: Դուք պետք է ինքնուրույն կողմորոշվեք, և կձևավորվեն ճիշտ նպատակի, խնդիրները տեսնելու և դրանք հաղթահարելու ուղիները, այնուհետև կհասնեք հաջողության», - ընդգծեց ԵՊԲՀ գիտության գծով պրոռեկտորը՝ կարևորելով նաև այն հանգամանքը, որ այժմ երիտասարդ հետազոտողների, գիտնականների գործունեության կիզակետում ոչ միայն դպրոցներն են, այլև մանկապարտեզները:

«Հերացի» համալսարանական հիվանդանոցի նյարդաբանական ծառայության ղեկավար, ԵՊԲՀ նյարդաբանության ամբիոնի ասիստենտ Եկատերինա Հովհաննիսյանը, ողջունելով ներկաներին, անդրադարձավ Պարկինսոնի հիվանդությանը:

«Մենք սկսելու ենք քննարկել ներդրությանամիտները և դրանց կլինիկական դրսևորումները»

ըր՝ հասկանալու համար, թե ինչքանով եք հիշում ներդրմանս միտքերը, կպատկերացնե՞ք՝ ինչ դրսևորումներ կունենան դրանց խանգարումները»:

Մասնագետը տրամաբանական հարցույատասխանով ներկաների հետ քննարկեց տարբեր մասնագիտական դեպքեր և հասկանալ, թե ինչպես պետք է պայքարել դրանց դեմ:

Այնուհետև նյարդաբանության ամբիոնի կլինիկական օրդինատոր Մարինե Մխիթարյանն անդրադարձավ կողմնային ամիոտրոֆիկ սկլերոզին՝ հետաքրքիր դեպքեր ներկայացնելով:

Հարցույատասխանի ավարտին լավագույն արդյունքներ գրանցած մասնակիցներին գրքեր հանձնվեցին:

«Ուղեղի ճանաչման շաբաթը» միջազգային արշավ է, որն իրականացվում է 1996 թվականից՝ նպատակ ունենալով ամբողջ աշխարհում նպաստել ուղեղի հետազոտության ոլորտում առաջընթացի և բացահայտումների մասին հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

Գիտական շաբաթը եզրափակող երկու օրերը անցան լեւի-լեցուն դահլիճում՝ լավագույն դասախոսություններով, քննարկումներով, քվեաթով ու մեծագույն ոգևորվածությամբ:

Նախավերջին օրը նշանավորվեց կինոդիտմամբ, քննարկմամբ, հետաքրքիր ու ինֆորմատիվ զեկույցով, որը կրում էր «Tryptophan to Tryptofun կամ մեկ օր սերոտոնինի հետ» խորագիրը և ներկայացվեց կենսաքիմիայի ամբիոնի դասախոս, COBRAIN կենտրոնի գիտաշխատող Հասմիկ Հարությունյանի կողմից: Օրվա ավարտն ամենից մրցակցայինն ու թե՛մ էր՝ քվեաթի շնորհիվ:

Եզրափակիչ օրվա դասախոսությունների մասին կարելի է երկար խոսել:

ԵՊԲՀ ախտաֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ Արտեմ Գրիգորյանի դասախոսությունն արյուն-ուղեղային պատնեշի մասին դահլիճում գիտական մթնոլորտն ու ոգևորվածությունը հասցրեց առավելագույնի՝ յուրաքանչյուր մասնակցի համար դառնալով ոգեշնչման ու նոր բացահայտումների հսկայական աղբյուր:

Օրվա գիտելիքի պաշարը հարստացրեց «Արաբկիր» բժշկական կենտրոնի նյարդավիրաբուժական ծառայության ղեկավար Նիկո Արզումանյանը՝ ուղեղին ֆիզիկապես ամենաշատն առնչվող՝ «Deep Brain Stimulation» անչափ հետաքրքրական դասախոսությամբ:

Շաբաթվա ամփոփումը փակման արարողությունն էր, որը նշանավորվեց ԵՊԲՀ պրոռեկտոր Կոնստանտին Ենկոյանի ելույթով՝ ուղղված գիտության զարգացման գործին լծված ուսանողներին ու միջոցառմանը:



ԱԼՑՆԵՅՄԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ «ՈՐՂԵՂԻ ՃԱՆԱԶՄԱՆ ՇԱԲԱԹՎԱ» ՇՐՋԱՆԱԿՈՒՄ



«Ուղեղի ճանաչման շաբաթվա» («Brain Awareness Week») շրջանակում անցկացվեց պանելային քննարկում Ալցհեյմերի հիվանդության վերաբերյալ:

«Ալցհեյմերի հիվանդություն. հայացք տարբեր տեսանկյուններից» խորագիրը կրող քննարկման մասնակիցներին ողջունեց կենսաքիմիայի ամբիոնի երկարամյա վարիչ, պրոֆեսոր Միխայիլ Աղաջանովը. «Հաճելի է տեսնել, որ դահլիճը լեփ-լեցուն է այս օրերին: Փոխվել է ուսանողների հետաքրքրությունը գիտության նկատմամբ: Դա վկայում է այն մասին, որ ապագա բժիշկներն ավելի ճիշտ են հասկանում իրենց դերը հասարակության զարգացման մեջ, գիտության դերը իրենց՝ որպես մասնագետների հասունացման գործում: Այսօր խոսելու ենք նեյրոդեգեներատիվ հիվանդությունների մասին: Նեյրոդեգեներացիան այն թեման է, որը պայմանավորել է տարածաշրջանում առաջատար «ԲՈՒՐԵՅՆ» կենտրոնի ստեղծումը»:

Ալցհեյմերի հիվանդությունը, նրա խոսքով, պայմանավորված է մարդու օրգանիզմում նեյրոնների քայքայմամբ:

Պրոֆեսորը ներկայացրեց հիվանդության առաջացման պատմությունը, այս հիվանդությունն ունեցող մարդկանց դինամիկան տարիների ընթացքում:

«Ըստ կանխատեսումների՝ յուրաքանչյուր քսան տարվա ընթացքում պացիենտների քանակը կրկնապատկվելու է: Այսօր աշխարհում 55 միլիոն մարդ ունի Ալցհեյմերի հիվանդություն: 2050 թվականին ենթադրվում է, որ այդ թիվը կհասնի 135 միլիոնի», - հայտնեց Միխայիլ Աղաջանովը՝ հավելելով, որ պացիենտների թիվը հիմնականում ավելանում է ցածր և միջին եկամուտ ունեցող երկրների հաշվին:

Պրոֆեսորն անդրադարձավ նաև Ալցհեյմերի հիվանդության ռիսկի գործոններին, ախտորոշմանը և բժշկական բուժում այդ ուղղությամբ արված հետազոտությունների արդյունքներին:

Քննարկմանը մասնակցող մասնագետները՝ ԵՊԲՀ գիտության գծով պրոռեկտոր Կոնստանտին Ենկոյանը, նյարդաբանության ամբիոնի վարիչ Հովհաննես Մանվելյանը, ախտաֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ Արտեմ Գրիգորյանը և գերիատրիայի և գերոնտոլոգիայի հայկական ասոցիացիայի նախագահ Արթուր Թորոսյանը, վերլուծեցին հիվանդությունը բոլոր մակարդակներում՝ կլինիկական դրսևորումներից և ուղեղում կատարվող ախտաբանական փոփոխություններից մինչև սոցիալական նշանակություն:

Նյարդաբանության 3-րդ կուրսի կլինիկական օրդինատոր Անի Ղազարյանը ներկայացրեց Ալցհեյմերի հիվանդության վերաբերյալ գեկոյց:

«Միասին վերծանենք մտքի քիմիական սիմֆոնիան» խորագրի ներքո անցկացվող «Ուղեղի ճանաչման շաբաթվա» երրորդ գիտական օրը եզրափակվեց «ԲՈՒՐԵՅՆ» ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոնի ասպիրանտ Էլլա Բադդասարյանի՝ «Գենոմի արձագանքները կողմնային փոփոխներից ավելի դրսայնորեն» վերնագրով գեկոյցով:

Յ.Գ. Նշենք, որ միջոցառումը տեղի է ունեցել պրոֆեսոր Աղաջանովի մահվանից օրեր առաջ:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹՆ ԱՄՓՈՓԵՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԵՊԲՀ ՔՈՐԲԵՅՆ գիտելիքի և տեխնոլոգիաների փոխանցման գրասենյակի և UWC Դիլիջան միջազգային դպրոցի կողմից համատեղ իրականացվող Brain Bee Armenia and Georgia մրցույթը անցկացրեց եզրափակիչ փուլը:

Մրցույթի հաղթող ճանաչվեց «Հերացի» ավագ դպրոցի աշակերտ Հրանտ Շադյանը, ով ներկայացրեց Հայաստանը Brain Bee միջազգային մրցույթին:

Brain Bee միջազգային մրցույթին Վրաստանը ներկայացրեց Իոնա Գվիլիան (Թբիլիսիի N 162 հանրակրթական դպրոց): Մրցույթի երկրորդ տեղը զբաղեցրեց Կոնստանտին Թորոսյանը (Հայաստանի Բրիտանական դպրոց): Երրորդ տեղը հավասար միավորներով կիսեցին Ալվինա Սեդրակյանը («Այբ» ավագ դպրոց) և Անի Իսրայելյանը (Արմավիրի Ռուբեն Եղոյանի անվան թիվ 1 ավագ դպրոց):

Ամիսներ շարունակ ուսանողները ԵՊԲՀ դասախոսական կազմի աջակցությամբ համարեցին գիտելիքների իրենց պաշարը և բազմակողմանի պատկերացում կազմեցին ուղեղի կառուցվածքի և աշխատանքի մասին:

Մրցութային օրը ուսանողների համար դասախոսություններ կարդացին ԵՊԲՀ գիտության գծով պրոֆեսոր, ՔՈՐԲԵՅՆ կենտրոնի գլխավոր գիտաշխատող Կոնստանտին Ենկոյանը և Նենսկիի փորձարարական կենսաբանության ինստիտուտի դասախոս Ալիսյա Պուսշիանը:

Դասախոսությունների ընթացքում ուսանողները հնարավորություն ստացան ծանոթանալ գիտնականների գործունեությանը և ոլորտի մասնագիտական հեռանկարներին:

Brain Bee Armenia and Georgia մրցույթի կամավորները

Brain Bee Armenia and Georgia մրցույթի կամավորների ձգտումն ու նվիրվածությունը զգալի նշանակություն ունեցավ մրցույթի կայացման գործում:

Աշխատանքներում ընդգրկվել են ԵՊԲՀ ուսանողներ Աննա Միրադեդյանը, Անժելա Մալոբյանը, Ռուբեն Մինասյանը, Էլեն Հայրապետյանը, Սուրեն Վլադյանը, Անի Գաբրիելյանը, Լուիզա Ղազարյանը, Մանե Ղևոնդյանը, Մանե Կուրդիսյանը, Արթուր Ռիզերը, Աբրահամ Համբարձումյանը, Էմմա Հովսեփյանը, Նանե Ենգիբարյանը, Այա Ղանդիլյանը, Կարմելա Աբադյանը և UWC Դիլիջան դպրոցի աշակերտներ Յակոբ Զարկոն և Պատրիկ Ստեմազեկը:

Մրցույթի համակարգողներն էին Միեր Կուրդիսյանը և Կորնելիա Բարտոշևիցը:

Կամավորներն ընդգրկվել են ինչպես կազմակերպչական, այնպես էլ գիտական թիմերում և օգնել ողջ գործընթացին:

Մանե Ղևոնդյանը նշում է, որ իր երկրի առաջին Brain bee օլիմպիադայի աշխատանքներում ներգրավված լինելը մեծ բավականություն է եղել, քանի որ օգնել է հետաքրքրություն առաջացնել ներդրողության նկատմամբ դպրոցականների շրջանում:

Ռուբեն Մինասյանը ոգևորությամբ է փաստում, որ անփոխարինելի փորձ էր ընդգրկվել այն մարդկանց թիմում, որոնք կրթում են երկրի երիտասարդ շտրեհալիներին:

Նրա խոսքով՝ զգացվում էր երիտասարդների բոլոր հետաքրքրությունն ու մոտիվացիան, և դա ոգեշնչում էր աշխատանքային ամիսներին:

Մեր շտրեհակալությունն ենք հայտնում բոլոր կամավորներին՝ Brain Bee Armenia and Georgia մրցույթում անշահախնդիր աշխատանքի և անզնախառելի ներդրման համար:



«ԲՐԵՅՆ ՌԻՆԳ» ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ



Բժշկական համալսարանում անցկացված «Բրեյն ռինգ» ինտելեկտուալ միջոցառմանը մասնակցում էր ապագա բժիշկների 5 խումբ:

Համաճարակաբանության ամբիոնի վարիչ, ԵՊԲՀ առողջապահական ծրագրերի ազգային գիտահետազոտական կենտրոնի ղեկավար Մերի Տեր-Ստեփանյանի նախաձեռնությամբ կազմակերպված հերթական միջոցառման ժյուրիի կազմում էին ամբիոնի դասախոսները, որոնք խաղի ավարտին գնահատեցին խմբերին տարբեր անվանակարգերում:

Խմբերը միմյանց ուղղեցին մասնագիտական տարբեր հարցեր՝ դիզենտերիայի, տուբերկուլյոզի, խոլերայի, այլ հիվանդությունների ախտորոշման և բուժման, հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման, պատվաստումների ժամկետների և պատվաստանյութերի նպատակահարմարության վերաբերյալ՝ այդ կերպ հարստացնելով իմացությունն ու գիտելիքը տարբեր թեմաների շուրջ:

Լավագույններն արժանացան մրցանակների:



ԴԱՍԸՆԹԱՅԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԻՊՈՒՄ



Տեղի ունեցավ ԵՊԲՀ ՔՈԲՐԵՅՆ գիտելիքի և տեխնոլոգիաների փոխանցման գրասենյակի կողմից իրականացվող հետազոտական հնտությունների զարգացման դասընթացի տեղեկատվական հանդիպումը:

ԵՊԲՀ գիտության գծով պրոռեկտոր, ՔՈԲՐԵՅՆ կենտրոնի գլխավոր գիտաշխատող Կոնստանտին Ենկոյանը կարևորեց նմանատիպ ծրագրերին ոլորտի մասնագետների մասնակցությունը և նշեց՝ աշխատելով ակադեմիական միջավայրում, պետք է ունենալ հետազոտություն իրականացնելու համապատասխան գիտելիք և հնտություններ:

Գիտելիքի և տեխնոլոգիաների փոխանցման գրասենյակի պատասխանատու Մարիամ Մովսիսյանի խոսքով՝ ծրագիրը հազեցած է լինելու բժիշկներին և հետազոտողներին անհրաժեշտ հետազոտական հնտությունների զարգացման համար ամբողջական գործիքակազմով և լինելու է շարունակական:

Տեղեկատվական հանդիպմանը հրավիրված էր Առողջապահության համաշխարհային կազմակերպության փորձագետ Ռոնի Զաքարիան (PhD):

Դասախոսության ընթացքում մասնագետը խոսեց կիրառական հետազոտությունների գործածության և կարևորության մասին: Դասընթացը տևելու է երեք ամիս՝ հայերենով և անգլերենով, որի ընթացքում հետազոտական ոլորտի մասնագետների կողմից մասնակիցները կխորացնեն իրենց հետազոտական հնտությունները:

Հավելե՛ք, որ արդեն շատ դիմորդներ են գրանցվել: Մասնակիցների ընտրության առաջնահերթությունը տրվելու է դասախոսներին, բժիշկներին և երիտասարդ մասնագետներին:

Դասընթացը նպատակ ունի նաև խրախուսել իզական սեռի ներկայացուցիչների ներգրավվածությունը ԲՏՀՄ (STEM) ոլորտում, մասնավորապես՝ ուղեղի հետազոտություններում:



ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ՝ ՊԱԼԻԱՏԻՎ ԽՆԱՄՔԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը մասնակցում է Եվրոպական Միության COST-Action CA22127 «Ներառական և մշակութային առումով համապատասխան համատեղ մշակված գնահատման գործիք՝ պալիատիվ խնամքի կրթության համար» ծրագրին:

Բուիք ծրագրի շրջանակում ներկայացնում են հանրային առողջության և առողջապահության կազմակերպման ամբիոնի վարիչ Արտաշես Թադևոսյանը և անտաթեզիոլոգիայի ամբիոնի դասախոս Աշոտ Գյուլբուդաղյանը:

Արտաշես Թադևոսյանի խոսքով՝ Եվրոպական Միությունն ունի ֆինանսավորվող ծրագրերի մի քանի խոշոր ուղղություն՝ «ԷԲԱԶՄՈՒՄ»- հիմնականում կրթական ծրագրերն են, «ՀՈՐԻ-ՋՈՆ» - հետազոտական ծրագրերն են, և COST-Collaboration of Science and Technology, որը վերաբերում է տեղեկատվության տարածմանը, հասարակության իրազեկվածության բարձրացմանը, համագործակցության և կապերի ստեղծմանը:

Տվյալ ծրագրի կոորդինատորը Զայցբուրգի Պարացելսիուսի անվան բժշկական համալսարանն է: Ծրագրի մեկնարկը տրվել է 2023 թվականի սեպտեմբերին, այն կտևի 4 տարի՝ ավարտվելով 2027 թվականի սեպտեմբերին:

«Այն ժամանակ, երբ գրվում էր ծրագիրը, 20-21 համալսարան էր համագործակցում: Բայց, ի տարբերություն մնացած ծրագրերի՝ այստեղ կարելի է անընդհատ անհատական մակարդակով միանալ: Ծրագիրը նախատեսված է 4 տարվա համար, բայց առաջին 2 տարվա ընթացքում անհատները ևս կարող են միանալ: Այս պահի դրությամբ՝ ծրագիրը ներառում է 27 երկրի ներկայացուցիչ: Մեզ համար շատ պատվաբեր է, որ տարածաշրջանից միայն մեր երկիրն է մասնակցում ծրագրին», - հպարտությամբ նշում է Արտաշես Թադևոսյանը:

Առաջին հանդիպումը, նրա տեղեկացմամբ, տեղի է ունեցել 2024 թվականի հունվարի 30-31-ը՝ Զայցբուրգում (Ավստրիա), երկրորդ աշխատանքային հանդիպումը տեղի կունենա Հայաստանում՝ բժշկական բուհի հյուրընկալ տանիքի սերքո՝ հունիսի 24-25-ը:

«Մա շատ հետաքրքիր և կարևոր միջոցառում է, որովհետև Հայաստանում պալիատիվ խնամքի ծառայությունը՝ որպես այդպիսին, առաջին քայլերն է կատարում: Պահանջարկն իրականում շատ մեծ է, որովհետև Հայաստանում տարեկան մոտ 18-20 հազար պալիատիվ խնամքի ծառայության շահառու կա: Եթե հաշվի առնենք, որ պալիատիվ խնամքն ամբողջ ընտանիքի համար է, մոտավորապես 100 հազար շահառու կունենանք և պիտի կարողանանք ապահովել այդ ծառայության տրամադրումը: Մեր խնդիրն է գնահատել կրթական ծրագրերը, չափորոշիչները, որոնք կիրառվում են ծրագրի հաստատման համար, նույնիսկ այն երկրներում, որտեղ ծրագիրն արդեն գործում է (Եվրոպական երկրները նույնպես խնդիրներ ունեն), լավագույն փորձը բերելով՝ խթանել նոր, համակարգված, ունիֆիկացված կրթական ծրագրերի և բնակչության իրազեկման ծրագրերի մշակմանը», - ընդգծում է պրոֆեսորը՝ հավելելով, որ այս հարցում շատ մեծ նշանակություն ունեն հոգեբանական, պատմական առանձնահատկությունները, սովորույթները, և կրթական բոլոր նյութերը ոչ միայն պետք է թարգմանվեն, այլև տեղայնացվեն, որպեսզի համահունչ լինեն հայկական ազգային առանձնահատկություններին:



ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՐՆԵՐԻ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԸ



Մանկաբուժության թիվ 1 ամբիոնում անցկացվեց օտարերկրացի կլինիկական օրդինատորների մասնակցությամբ հերթական զեկուցումը:

Այս անգամ զեկուցման թեման վերաբերում էր երեխաների մակերիկամների կեղևի դիսֆունկցիային:

Զեկուցումը ներկայացնում էր ազգությամբ հնդիկ, երկրորդ կուրսի կլինիկական օրդինատոր Աառթի Սուբրամանիան Ռավիչանդիրան:

Նմանատիպ միջոցառումներն ամբիոնում անցկացվում են յուրաքանչյուր շաբաթ:



«Այստեղ սովորում է 6 անգլալեզու կլինիկական օրդինատոր, իսկ սեմինարներին մասնակցում են համալսարանական հիվանդանոցի բոլոր օրդինատորները, այսինքն՝ ն՝ ինֆեկցիոնիստներ, ն՝ ռեանիմատոլոգներ, ն՝ իհարկե, մանկաբույժներ», - մանրամասնում է մանկաբուժության թիվ 1 ամբիոնի վարիչ, «Մուրացան» հիվանդանոցի մանկաբուժության թիվ 1 կլինիկայի ղեկավար, պրոֆեսոր Կարինե Սիմոնյանը՝ կարևորելով ապագա մասնագետների ակտիվ ներգրավվածությունը ոչ միայն կլինիկական, այլև գիտական աշխատանքներում:

ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ՝ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱՐ




Հարգելի ուսանողներ,

2024 թվականի հունիսի 17-22-ը Ռումինիայի Կլուժ-Նապոկա քաղաքի համալսարանի հանրային առողջության ֆակուլտետում տեղի կունենա iCREATE ամառային դպրոցը, որը նախատեսված է ուսանողներին հանրային առողջության ծրագրեր նախագծելու, իրականացնելու և գնահատելու հմտություններ տրամադրելու համար, հիմնականում՝ բռնության և վնասվածքների կանխարգելման և վերահսկման ուղղությամբ:

Սեմինարների ընթացքում կդասավանդեն վնասվածքների և բռնության կանխարգելման մի շարք փորձագետներ Ռումինիայից, ԱՄՆ-ից, Հայաստանից, Վրաստանից և Մոլդովայի Հանրապետությունից: Ամբողջ դասընթացն անցկացվելու է անգլերենով:

3 ուսանող կարող է օգտվել դրամաշնորհային ծրագրից, որի դեպքում ամառային դպրոցը կլինի անվճար: Այլ մանրամասների համար կարող եք անցնել հղումով կամ դիմել հանրային առողջության և առողջապահության կազմակերպման ամբիոնի վարիչ Արտաշես Թադևոսյանին:

ՄԱՆԿԱԲՈՒԺԱԿԱՆ ՎԵՔԻՆԱՐՆԵՐ



ԵՊԲՀ մանկաբուժության թիվ 1 ամբիոնը մանկաբույժների համար նախաձեռնել էր կրթական առցանց հարթակ, որում կենտրոնացված էին առաջատար մասնագետների փորձն ու գիտելիքը:

Ամբիոնի վարիչ, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի մանկաբուժական կլինիկայի ղեկավար, պրոֆեսոր Կարինե Միմոնյանը անցկացրեց առցանց վեբինարներ՝ հետևյալ թեմաներով.

- Երեխաների հազը. բուժել, թե՛ չբուժել,
- Ցածրահասակություն. կոնստիտուցիան, թե՛ ախտաբանություն,
- Դժվար ախտորոշում. իմունային անբավարարություն,
- Նորածինների վիտամին K դեֆիցիտային կոագուլոպաթիա,
- Մակվարյունություն,
- Ալերգիկ ռինիտ. ասթմա,
- Ցելիակիա,
- Գլխացավ,
- Երկարատև հազացող երեխա,
- Կրկնվող շնչառական վարակներ,
- Որովայնացավ:

«Կրթված մանկաբույժ՝ առողջ սերնդի երաշխավոր» խորագրով գարնանային վեբինարների մեկնարկը տրվեց մարտի 17-ին, որին մասնակցել է 45 մանկաբույժ: Կարինե Միմոնյանի նախաձեռնությամբ ձևավորվել է կրթական առցանց հարթակ, որտեղ կենտրոնացվելու են առաջատար մասնագետների փորձն ու գիտելիքը:

Առցանց առաջին հանդիպմանը, որը նվիրված էր «Երեխաների հազը. բուժել, թե՛ չբուժել» թեմային, բանախոսն էր պրոֆեսոր Միմոնյանը, ով անդրադարձավ մասնագիտական մի շարք թեմաների, պատասխանեց տասնյակ հարցերի:

«Մասնակցում էին մանկաբույժներ Արարատից, Տավուշից, Մասիսից, Հրազդանից, Սևանից, Էջմիածնից, հանրապետության այլ բժշկական կենտրոններից»,- մանրամասնում է կրթական այս նոր ծրագրի հեղինակը՝ հավելելով, որ մասնակիցների արձագանքները շատ ոգևորիչ էին:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ



ԵՊԲՀ «Շերացի» ավագ դպրոցը՝ բուհի միջազգային համագործակցության բաժնի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության Քյոլնի Ուրսուլինեն ռեալական դպրոցի հետ գործակցության շրջանակում իրականացնում է «Երիտասարդների աջակցման GO East» ծրագիրը: Երևան-Քյոլն կրթամշակութային փոխանակման ծրագրի առանցքում բարեկամության և փոխըմբռնման ուղեծիրն է՝ որպես երկու երկրների երիտասարդների միջև հարաբերությունների կառուցման նոր աստիճան:

Ծրագրի կարգախոսն է՝ «Ինչպե՞ս ենք հիշում Հոլոքոստը և Հայոց ցեղասպանությունը, հայացք Հայաստանի և Գերմանիայի անցյալին՝ ներկան և ապագան ձևավորելու և արժևորելու նպատակով»:

Ծրագրի նպատակն է խթանել պատմական հիշողության պահպանման մշակույթը՝ որպես հետագա ցեղասպանությունների բացառման միջոց.

- ամրապնդել և խորացնել գիտելիքները համապատասխան պատմական իրադարձությունների վերաբերյալ,
- վառ պահել պատմական հիշողությունը,
- կարևորել մարդու իրավունքների պաշտպանությունը,
- զարգացնել հումանիստական մտածողությունը,

- նպաստել միջմշակութային փոխըմբռնմանը և արդյունավետ հաղորդակցմանը:

Ծրագրի շրջանակում «Շերացի» դպրոցի 11 աշակերտ այցելեց Քյոլն, որտեղ իրականացրին նախագծային աշխատանքի առաջին փուլը, ինչպես նաև՝ հաղորդակից դարձան գերմանական մշակույթին:

Աշակերտները եղել են Քյոլնի տաճարում, Յաճխեի պատմական հուշահամալիրում, Լյուդվիգ Վան Բեթհովենի տուն-թանգարանում (Բոն), Գերմանիայի պատմության թանգարանում (Բոն), Քյոլնի Շոկոլադի թանգարանում: Այցն ուղեկցվել է հետաքրքիր ժամանցով և անմոռանալի տպավորություններով:

Նախագծային աշխատանքները կազմակերպվել են Յաճխեի պատմական հուշահամալիրում: Աշխատանքի արդյունքները ներկայացվել են ցուցահանդես-միջոցառման ժամանակ: Ցուցահանդեսի բացման արարողությանը ներկա են եղել Ուրսուլինեն ռեալական դպրոցի խորհրդի նախագահը՝ Ալֆրեդ Շվանկեն, եկեղեցու ներկայացուցիչները, Յաճխեի հուշահամալիրի աշխատակազմը և ղեկավար անձինք, տեղական մամուլի և ուղիորդի լրագրողներ, ինչպես նաև՝ աշակերտների ծնողները: Միջոցառումը լուսաբանվել է Քյոլնի տեղական մամուլով և ուղիորդով:

200 Ուսանող՝ Անոթագիտական Վերաբուծության Դասընթացի Մասնակից

Բժշկական համալսարանի կարիերայի կենտրոնի արտաբանական ընկերությունը և «Լանցետ» միջազգային ուսանողական ծրագիրը անցկացրին անոթային վիրաբուժության երկօրյա համատեղ դասընթաց:

Միջոցառմանը ելույթ ունեցան արտաբանական ընկերության նախագահ, ապագա արտաբան Մերլին Ջորջը և «Լանցետի» համակարգող, մեկնոր, անոթային վիրաբույժ Տիգրան Սևյանը:

Երկու օրերի ընթացքում էլ մոտ 200 ուսանող էր մասնակցում դասընթացին:

«Լանցետ» ծրագրի թիմը կենդանու աորտայի վրա ցուցադրեց անաստամոզի տարբեր մեթոդներ՝ միաժամանակ մանրամասնորեն բացատրելով գործընթացի յուրաքանչյուր քայլը:

Վիճակահանության արդյունքում ութ հաջողակ ուսանող դիտելցիա կատարելու և կար դնելու հնարավորություն ստացավ:

Դասընթացի մասնակիցներն արժանացան հավաստագրերի՝ մասնակցելով երկօրյա «ինտրիգային» և զվարճալի բժշկական հարցումներին:

Նշենք, որ բժշկական համալսարանում գործող արտաբանական ընկերությունն ունի մոտ 280 անդամ և 25 մասնակցից բաղկացած գործադիր կոմիտե:

«Լանցետ» միջազգային ուսանողական ծրագիրը Հայաստանում առաջին անգամ ներդրվեց բժշկական բուհում: Այն հարթակ է, որտեղ ուսանողը՝ գիտական ղեկավարի հովանավորությամբ, հմտություններ է սովորեցնում մյուս ուսանողներին: Ծրագիրն ամբողջությամբ ֆինանսավորվում է ԵՊԲՀ-ի կողմից: Նպատակը վիրաբուժական կադրերի նախապատրաստումն է:



«Հերացի» թիվ 1 համալսարանական հիվանդանոց

Ինչ բազային հետազոտություններ է պետք անցնել գարնանը



Ձմեռային սեզոնի ընթացքում լույսի, ֆիզիկական ակտիվության, վիտամինների պակասը օրգանիզմի համար հաճախ դառնում է սթրեսի նախապայման:

Այդ պատճառով բժիշկները խորհուրդ են տալիս ստուգել սեփական առողջությունը՝ անցնելով գարնանային «check-up»:

Որո՞նք են այդ հետազոտությունները և ինչ նպատակ ունեն:

1. Արյան և մեզի ընդհանուր հետազոտություն՝

օգնում է գնահատել օրգանիզմի ընդհանուր վիճակը:

2. Արյան կենսաքիմիական հետազոտություն՝

ավելի խորացված հետազոտություն է, որը թույլ է տալիս գնահատել լյարդի, երիկամների, ստամոքսաղիքային և սիրտանոթային համակարգերի գործառնությունը:

Այս հետազոտությունը նաև թույլ է տալիս հաստատել կամ բացառել բորբոքային պրոցեսները և նյութափոխանակության խանգարումները:

Խորհուրդ է տրվում ստուգել՝ ԷՆԱ, ԱՍՍՏ, ԱԼԱՏ, քիլիոռոբին, ընդհանուր սպիտակուց, միգանյութ, կրեատինին, միզաթթու, խոլեստերին, եռգլիցերիդներ, գլյուկոզ:

3. Վահանաձև գեղձի հորմոններ՝ ԹԹՀ, T3, T4

Վահանաձև գեղձը վերահսկում է կենտրոնական նյարդային համակարգի գործունեությունը, հոգեկան և մտավոր կարգավիճակը, ազդում է նյութափոխանակության, սրտի աշխատանքի, շնչառական օրգանների և վերարտադրողական գործառնության վրա:

Գեղձի աշխատանքի խանգարումը կարող է բերել տագնապի և սթրեսի աստիճանի բարձրացմանը:

4. Կոագուլոգրամա՝

Ցանկալի է հանձնել, եթե անձը զգում է թուլություն, հոգնածություն, կենտրոնացման դժվարացում, գլխացավեր, ապաթիա:

Հաճախ այս երևույթների պատճառը լինում է արյան մակարդելիության բարձրացումը է:

5. Վիրամին D-ի մակարդակի որոշում՝

Համաձայն վիճակագրության՝ բնակչության 80%-ը ձմռան ավարտից հետո ունենում են վիտամին D-ի պակասություն, որը կարող է բերել մկանային թուլության, դեպրեսիայի, ավելորդ քաշի և ոսկրերի խտության նվազման:

Հետազոտությունների պատասխանները ստանալուց հետո կարևոր է խորհրդակցել ձեզ բուժող կամ ընտանեկան բժշկի հետ:

Երբ այցելել նյարդաբանին. պարզարևում է մասնագետը



Նյարդաբանությունը բժշկության շատ կարևոր ոլորտ է, որը զբաղվում է ծայրամասային և կենտրոնական նյարդային համակարգի հիվանդություններով: Նյարդաբանությունը հիմնականում կենտրոնանում է այն հիվանդությունների վրա, որոնց արմատը մարդու նյարդային համակարգը քայքայող գործընթացներն են:

Մարմնի յուրաքանչյուր բջիջ կապ ունի նյարդային համակարգի հետ և անմիջական փոխազդեցություն ունի նրա հետ՝ ենթարկվելով բարձրագույն նյարդային գործունեության հրահանգներին:

ԵՊԲՀ «Հերացի» համալսարանական հիվանդանոցի նյարդաբանական ծառայության ղեկավար Եկատերինա Հովհաննիսյանն անդրադարձել է նյարդաբանական մի շարք խնդիրներին և դրանց լուծումներին:

Հարցին, թե երբ և ո՞ր պարագայում է անհրաժեշտ այցելել նյարդաբանին, մասնագետը նշեց, որ, ցավոք սրտի, կա ընդհանուր կարծրատիպ, և նյարդաբան ասելով՝ մարդիկ

առաջինը հասկանում են, որ այս մասնագետին պետք է դիմել միայն հոգեբանական խնդիրներ ունենալու դեպքում:

«Սակայն պետք է ընդգծեմ, որ նյարդաբանը զբաղվում է օրգանական այտահարումներով: Նյարդաբանը բուժում է ուղեղի, ողնուղեղի և ծայրամասային նյարդային համակարգերի հիվանդությունները: Իսկ մարդկանց մոտ տարածված այն կարծիքը, որ ներքո վիճակները նյարդաբանի պաթոլոգիան է, իրականում այդքան էլ այդպես չէ», - նշեց նյարդաբանը:

Մասնագետն ընդգծեց, որ կան հստակ սիմպտոմներ, որոնց հատկապես առաջին անգամ արտահայտվելու դեպքում պարտադիր պետք է դիմել նյարդաբանի:

«Ձեռքի կամ ոտքի հանկարծակի թուլացումը, տետոսիայի հանկարծակի վատացումը, մարդու մոտ հավասարակշռության կորուստը, գլխապտույտը կամ սուր գլխացավն այն հիմնական գանգառներն են, որոնց պարագայում անհապաղ նյարդաբանին դիմելու անհրաժեշտություն կա», - ասաց նա:

Բժիշկ-նյարդաբանը շեշտեց՝ որքան վաղ սկսվի բուժումը, այնքան քիչ է կրկնվելու հավանականությունը: Մասնագետը խորհուրդ տվեց վարել առողջ ապրելակերպ, հետևել սննդակարգին, քայլել և զբաղվել սպորտով՝ չմոռանալով մտավոր և հոգևոր գործունեության մասին, խուսափել սթրեսից, որը բացասաբար է ազդում իմունային համակարգի վրա՝ առաջացնելով ինչպես նյարդաբանական, այնպես էլ տարբեր հիվանդություններ:

Նյութի սկզբնաղբյուրը՝ «Արմենպրես»-ի «Հարց բժշկին» նախագիծ:

Անցկացվեց հերթական գիտագործնական կոնֆերանսը

Ընդհանուր և ինվազիվ սրտաբանության կլինիկայի ինտենսիվ թերապիայի բժիշկ-սրտաբան, ԵՊԲՀ սրտաբանության ամբիոնի ասիստենտ Մարիամ Հովհաննիսյանը Մագդեբուրգի պետական բժշկական համալսարանի սրտաբանության կլինիկայի և բժշկական բուհի համագործակցության շրջանակում, նախորդ տարվա դեկտեմբերին՝ երկու շաբաթ տևողությամբ վերապատրաստում է անցել Գերմանիայի Մագդեբուրգի համալսարանական հիվանդանոցի սրտաբանության կլինիկայում:

Բժիշկ Հովհաննիսյանի փոխանցմամբ՝ բժշկական այս հաստատությունը հազեցվածությամբ, անձնակազմի պրոֆեսիոնալիզմով տարածաշրջանում լավագույններից է:

Վերապատրաստման հիմնական ուղղվածությունը սրտային անբավարարությունն էր՝ հաշվի առնելով մեր երկրում տվյալ հիվանդության հատկապես ծանր ձևերով պացիենտների մեծ քանակը, ինչպես նաև՝ ժամանակակից բուժման դժվարությունները:

«Երկու շաբաթվա ընթացքում, լինելով կլինիկայի բոլոր ստորաբաժանումներում, փորձեցի ծանոթանալ յուրաքանչյուր բաժանմունքի աշխատանքի առանձնահատկություններին: Ամենօրյա համայցերից բացի, մասնակցել եմ հիվանդների ընդունմանը, վարմանը, ծանոթացել դուրս գրվելուց հետո հիվանդների վարման առանձնահատկություններին: Առանձնացրել եմ հատկապես այն տարբերությունները, որոնք կարող են կիրառելի լինել մեր աշխատանքում», - ասաց երիտասարդ սրտաբանը:

Հենց այս տարբերությունները, դրանց հնարավոր կիրառելիությունն առօրյա աշխատանքում մանրամասն քննարկվեց գիտագործնական կոնֆերանսի ընթացքում:

Վերոնշյալ համագործակցությունը շարունակական է, նախատեսվում են երկկողմանի այցեր ինչպես բժիշկների, այնպես էլ բուժքույրերի համար:


Զեկույցով հանդես եկավ նաև ուրոլոգիական կլինիկայի բժիշկ Գարեգին Խաչատրյանը, ով ներկայացրեց հետորովանամանական մուտքով էնդոսկոպիկ պիելոլիթոտոմիայի դեպքը:

Հավաքագրված տվյալներով նման վիրահատություն Հայաստանում կատարվել է առաջին անգամ:

Մեթոդի էությունն այն է, որ կիրառելով ժամանակակից էնդոսկոպիկ սարքավորումները գոտկային հատվածից մուտք է ապահովվում անմիջապես դեպի երիկամ և հեռացվում են խոշոր չափի քարերը՝ առանց երիկամի պարենխիմալի վնասման (nephron sparing surgery):

Ի տարբերություն դասական լապարոսկոպիկ վիրահատությունների՝ տվյալ դեպքում սարքավորումները չեն անցկացվում որովայնի խոռոչ՝ դրանով նվազագույնի հասցնելով որովայնի օրգանների վնասման ռիսկը:

Մեթոդն առաջարկվում է որպես այլընտրանք՝ երիկամի խոշոր քարերի հեռացման համար:



ՆԵՐԴՐՎՈՒՄ Է ԻՆՎԱԶԻՎ ԱՌԻԹՄՈԼՈԳԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ



Անցյալ տարեվերջին ԵՊԲՀ կլինիկական աշխատանքների գծով պրոռեկտոր Արմեն Մինասյանի հերթական համայն ժամանակ նրա առաջարկով «Հերացի» համալսարանական հիվանդանոցում քննարկվել է ինտերվենցիոն առիթմոլոգիական ծառայության ներդրման հարցը:

Պրոռեկտոր Արմեն Մինասյանի և ընդհանուր և ինվազիվ սրտաբանության և ներքին հիվանդությունների կլինիկայի ղեկավար, ԵՊԲՀ սրտաբանության ամբիոնի վարիչ Համայակ Սիսակյանի հետ քննարկումների արդյունքում որոշվեց կլինիկայում ինվազիվ առիթմոլոգիական ծառայություն ներդնել, որից հետո սկսվեց այս ուղղությամբ աշխատանքային ակտիվ ընթացքը:

Կապերի հաստատում արտերկրի գործընկերների, ինչպես նաև՝ հայաստանյան առաջատար կլինիկաների հետ, փորձի փոխանակում, սկզբնական շրջանում ճանաչողական այցեր այլ բժշկական հաստատություններ. այս գործընթացներով սկիզբ դրվեց նոր ծառայության ներդրմանը:

Ծառայությունը ներդնելու պատասխանատվությունը հանձնարարվեց ինտենսիվ թերապիայի ծառայության բժիշկ-սրտաբան Արսեն Վարդանյանին, ով գործընկերներին գիտագործնական առաջին կոնֆերանսի ընթացքում զեկուցեց կատարված և ծրագրվող աշխատանքների մասին:

«Այլ բժշկական հաստատություններում դեպքերի մեծ մասը կյանքին վտանգ սպառնացող առիթմիաների կանխարգելման և բուժման պրոցեսներին էին նվիրված, ինչը ավելի մեծացրեց և ոգևորություն առաջացրեց, այնուհետև պայմանավորվածություն ձեռք բերվեց ուսուցողական այց կատարել Թբիլիսիի Ամերիկյան հոսպիտալ (American Hospital Tbilisi)», - մանրամասնեց բժիշկ Վարդանյանը՝ նշելով, որ տարվել են ուսումնական և կազմակերպչական ուղղություններով աշխատանքներ:

Կապ հաստատելով համապատասխան ընկերության հետ, ինչպես նաև Թբիլիսիի Ամերիկյան հոսպիտալի ինվազիվ առիթմոլոգիական ծառայության ղեկավար Ռոյն Ռեքվալայի հետ՝ նա գործուղվել է հարևան երկիր:

«Սկսեցի ձեռնարկել առաջին քայլերը՝ արժանանալով ջերմ վերաբերմունքի և առաջին մեկ շաբաթվա ընթացքում զգացի պրակտիկ այս ուսումնառության արդյունքները: Եվս երկու առաջատար կենտրոններ այցելելով՝ ծանոթացա առաջատար նեղ մասնագետների հետ: Բոլորի հետ մասնակցել եմ միջամտությունների՝ ունենալով ինքնուրույնության և վստահության զգացում»:

Շուրջ մեկ ամիս տևողությամբ աջի ընթացքում ձեռք բերվեցին նոր կապեր բժիշկների և բժշկական կազմակերպությունների շրջանում, ինչը հետագայում ստեղծվող ծառայությանը հնարավորություն կտա անհրաժեշտության դեպքում մասնագիտական, տեխնիկական աջակցություն ստանալ:

Այս պահին համալսարանական հիվանդանոցում հիմնադրման գործընթացը ընթացքի մեջ է:

Ձևավորվել է այս ծառայության հիմքը, ձեռք են բերվել համապատասխան համաձայնություններ, որոնց շնորհիվ Վրաստանից գործընկերները կկատարեն առաջին միջամտությունները համալսարանական հիվանդանոցում:



Հետագայում ևս փոխայցեր կկազմակերպվեն, կլինեն առանց խորհրդատվություններ: Սրտի ռիթմի և հաղորդականության խանգարման շտկման սարքերի իմպլանտացիայի միջոցով է ներդրվում այս նոր ծառայությունը, այնուհետև երկրորդ փուլում նախատեսվում է առիթմիաների բուժման արվացիոն տակտիկաների կիրառումը:

«Երախտապարտ եմ համալսարանական թիմին և ղեկավարությանը՝ հանձինս պրոֆեսորներ Մինասյանի, Սիսակյանի, Բաբլումյանի, գլխավոր բժշկի տեղակալ Զավախյանի՝ հնարավորության ընձեռման և օգնության համար», - ընդգծեց սրտաբանը, որը մեծ ուժ ու եռանդ ներդնելով՝ առաջիկայում ծրագրում է այցելել նաև ՌԴ և Գերմանիա՝ վստահ լինելով, որ ձեռքբերումները կլինեն ակնառու և շարունակական:

Ներկայացված նոր ծառայության վերաբերյալ մասնակիցները բազմաթիվ հարցեր ուղղեցին գեկուցողին, փոխանակվեցին տեսակետներով ու առաջարկներով:

Հիվանդանոցի ղեկավարության, կլինիկաների ղեկավարների, բժիշկների մասնակցությամբ հրավիրված այս միջոցառմանը հաջորդիվ գեկույց ունեցավ ԵՊԲՀ վիրաբուժության թիվ 4 ամբիոնի կլինիկական օրդինատոր Վլադիմիր Ռափյանը՝ «Լյարդի լապարասկոպիկ մասնահատում» թեմայով:

Վիրաբուժական կլինիկայում կատարվել է լյարդի լապարասկոպիկ եղանակով մասնահատում էխինոկոկոզի կապակցությամբ:

56 տարեկան պացիենտը դիմել էր բժշկական հաստատություն հետևյալ գանգատներով՝ մշտական սրտխառնոց, ծանրության զգացողություն աչ թուլակողում: Կատարված կլինիկոլաբորատոր և գործիքային հետազոտություններով ախտորոշվել է լյարդի աչ բլթի 6-րդ սեգմենտի էխինոկոկոզին բուշտ 6x5սմ չափերի:

Լապարասկոպիկ եղանակով կատարվել է լյարդի 6-րդ սեգմենտի եզրային մասնահատում, էխինոկոկոզին բշտի ամբողջական հեռացում: Մեկ ժամ 25 րոպե տևողությամբ վիրահատությունն անցել է հարթ, արյան կորուստը՝ մինիմալ (30-50 մլ):

Պացիենտը դուրս է գրվել կլինիկայից հետվիրահատական 5-րդ օրը բավարար վիճակում, նշանակվել է հակապարազիտար բուժում:

Վիրահատող թիմի կազմում էին վիրաբուժական կլինիկայի բժիշկներ և վիրաբուժության թիվ 4 ամբիոնի դասախոսներ Վահագն Համբարձումյանը, ք.գ.դ. Գագիկ Համբարձումյանը, ինչպես նաև՝ կլինիկական օրդինատորներ Վլադիմիր Ռափյանը և Դիանա Ատոմյանը:

Այսպիսով, վիրաբուժական ծառայությունը ևս ընդլայնել է լապարասկոպիկ վիրահատությունների ցանկը՝ փորձառու մասնագետների ընդգրկման և նորարարական տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ:



«Մուրացան» համալսարանական հիվանդանոց

«Մուրացանի» թիմին է միացել առաջարար վիրաբույժ Նիկոլայ Դալլաքյանը



Ուրախությամբ պետք է հայտնենք, որ «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի մեծ թիմին է միացել ԵՊԲՀ մանկական վիրաբուժության ամբիոնի դոցենտ Նիկոլայ Դալլաքյանը: Երկար տարիների մեծ փորձառությամբ վիրաբույժը ղեկավարելու է մեր համալիրի Մանկական վիրաբուժության կլինիկան:

Նիկոլայ Դալլաքյանը բժիշկ-մանկաբույժ է, առողջապահության հնուտ կազմակերպիչ՝ բուժհաստատության ղեկավարման տասնամյակների փորձով:

1984-1989 թթ. եղել է Երևանի պետական բժշկական համալսարանի մանկական վիրաբուժության ամբիոնի ասիստենտ, 1989 թվականից մինչ օրս բժշկական բուհի մանկական վիրաբուժության ամբիոնի դոցենտ է: Մինչև 1995 թվականը՝ Երևանի թիվ 3 մանկական հիվանդանոցի մանկական վիրաբույժ, 1995-2016 թվականներին եղել է Երևանի գլխավոր մանկական վիրաբույժը:

Նիկոլայ Դալլաքյանը 2007 թվականից մինչ օրս Հայկական մանկաբուժական ասոցիացիայի փոխնախագահն է, տարիներ շարունակ զբաղեցրել է ՀՀ ԱՆ գլխավոր մանկական վիրաբույժի պաշտոնը:

Բազմաթիվ վերապատրաստումներ է անցել Հայաստանում և արտերկրում:

Շնորհավորում ենք մեր գործընկերոջը Մանկական վիրաբուժական կլինիկայի ղեկավարի պաշտոնը ստանձնելու առիթով և մաղթում արգասաբեր աշխատանք՝ ուղղված փոքրիկների առողջության պահպանմանը:

Կլինիկական պրակտիկայից թեմայի քննարկում գիրագործնական կոնֆերանսում



Գիտագործնական կոնֆերանսի հերթական թեման կլինիկական պրակտիկայից էր:

12 տարեկան տղան դիմել էր Մանկական վիրաբուժության կլինիկա՝ գանգատվելով որովայնի շրջանում ցավերից, սրտխառնոցից, փսխումից, ջերմության բարձրացումից:

Կատարված կլինիկոլաբորատոր և գործիքային հետազոտությունների արդյունքում ախտորոշվել է սուր ապենդիցիտ:

Կատարվել է ապենդեկտոմիա՝ լիզատուրային եղանակով, մեծ ճարպոնի մասնակի ռեզեկցիա, սանացիա, դրենավորում:

Պացիենտի մոտ ախտորոշվել է սուր գանգրենոզ ապենդիցիտ, կոնքային թարախային պերիտոնիտ, օմենտիտ:

Վիրաբույժ Սոս Պետրոսյանի փոխանցմամբ՝ պացիենտը ստացել է հակաբակտերիալ, ինֆուզիոն և դեզինտոքսիկացիոն թերապիա:

Հետվիրահատական ընթացքն անցել է հարթ: Կատարված հյուսվածքաբանական հետազոտության արդյունքում հայտնաբերվել է որդանման ելուն՝ լավ տարբերակված նեյրոէնդոկրին ուռուցք Low Grade(G1):

Տարբերակիչ ախտորոշման համար մասնագետները խորհուրդ են տալիս կատարել իմունոհիստոլոգիական հետազոտություն:

Բժիշկ Պետրոսյանը շեշտում է, որ նեյրոէնդոկրին նորագոյացությունները, որոնք նախկինում հայտնի էին որպես կարցինոմներ, կույր աղիքի ուռուցքների ամենատարածված տեսակն են: Դրանք հազվագյուտ ուռուցքներ են և դանդաղ են աճում:

Կույր աղիքի նեյրոէնդոկրին նորագոյացությունների հաճախականությունը կազմում է մոտ 0,15-0,6/100000/տարեկան:

Հերթական գիտագործնական կոնֆերանսը

«Մուրացան» համալսարանական հիվանդանոցում՝ հերթական գիտագործնական կոնֆերանսին, թունաբանության և մանկական վերակենդանացման կլինիկայի բժիշկ, ռեանիմատոլոգ Աննա Չոբանյանը ներկայացրել է հազվադեպ հանդիպող շատ ծանր ընթացքով ջրծաղկի դեպք:

Երկու տարեկան երեխան մի քանի տարի առաջ ինֆելցիոն հիվանդանոցից տեղափոխվել էր «Մուրք Աստվածամայր» ԲԿ-ի վերակենդանացման բաժանմունք՝ ծայրահեղ ծանր վիճակով:

Ախտորոշվել էր ջրծաղկ, պոլիօրզան անբավարարություն (կոմա II, շնչառական անբավարարություն III, կոագուլոպաթիա, աջ ոտքի խորանիստ երակների թրոմբոզ, երիկամային անբավարարություն):

Երեխան բուժվել է 3 ամիս, ստացել է դեղերով բուժում, ԹԱՇ, պերիտոնեալ դիալիզ, կատարվել էր աջ սրունքի նեկրոզված հյուսվածքների հեռացում և աուտոպլաստիկա:

Դուրս է գրվել լավացումով, այժմ 9 տարեկան է, մնացորդային երևույթներ չկան:

Ուրախ ենք, որ մեր թիմին է միացել բանիմաց մասնագետ Աննա Չոբանյանը, որն իր երկար տարիների փորձով, գիտելիքով կնպաստի պացիենտների առողջության վերականգնման կարևոր գործին:



«Բնածին ստոծանիական ճողվածք» թեման՝ մանկական վիրաբույժի ներկայացմամբ

Հինգշաբթին կրկնակի հետաքրքիր է դառնում կլինիկայում, քանի որ մասնագետները հնարավորություն ունեն քննարկել կլինիկական դեպքեր, փոխանակվել տեսակետներով:

«Բնածին ստոծանիական ճողվածք» թեման նախորդ շաբաթ ներկայացվեց մանկական վիրաբուժության կլինիկայի բժիշկ Նարեկ Ալոյանի կողմից: Քննարկվող նյութը կլինիկական պրակտիկայից էր:

Բժիշկը ներկայացրեց հիվանդության անամնեզը, օբյեկտիվ զննման տվյալները, նախավիրահատական և հետվիրահատական ռենտգենոգրաֆիայի տվյալները:

Նշենք, որ բնածին ստոծանիական ճողվածքը հազվագյուտ հանդիպող խնդիր է և պահանջում է մանկաբուժական վիրահատություն:



«Միքայելյան» համալսարանական հիվանդանոց

Մարտի 8-ը՝ «Միքայելյան» համալսարանական հիվանդանոցում



«Միքայելյան» համալսարանական հիվանդանոցում ամեն հինգշաբթի անցկացվող հանդիպումն այս անգամ նախատեսական էր:

Կանանց համար, կանանց մասին, իրական պատմություններից մինչև հումորներ, բեմում սցենարիստ, պրոդյուսեր, stand-up արտիստ Տյուշ Գևորգյանն էր:

Իհարկե, 30-40 րոպեում դժվար էր համալսարանական ընտանիքի բոլոր իգական սեռի ներկայացուցիչներին հավուր պատշաճի անդրադառնալը, բայց կարևորը դահլիճում տի-րոդ բարձր տրամադրությունը, դրական հույզերն ու էներգետիկան էր:

Միջազգային օւլայն կոնֆերանս

«Միքայելյան» համալսարանական հիվանդանոցի գաստրոէնտերոլոգ-հեպատոլոգներ, ԵՊԲՀ ներքին հիվանդությունների (գաստրոէնտերոլոգիա և հեպատոլոգիա) ամբիոնի դասախոսներ Լիլիթ Հարությունյանը և Էդմոնդ Բաղդասարյանը մասնակցել են ադիների բորբոքային հիվանդությանը նվիրված միջազգային օւլայն կոնֆերանսի (IBD LIVE): Այն կազմակերպվել էր աշխարհի ամենահեղինակավոր երեք հիվանդանոցներից մեկի՝ Քլիվլենդի կողմից:

Այս քննարկմանը մասնակցել են համաշխարհային հռչակ ունեցող մի շարք հիվանդանոցների փորձագետներ, ինչպիսիք են Մայոյի, Ռոչեստերի, Յեյի, Ջոն Հոփքինսի հիվանդանոցները:

Հայաստանն, ի դեպ, առաջին անգամ է մասնակցել այս միջազգային կոնֆերանսին, ինչի մասին նշել են հենց կազմակերպիչները:

Միջազգային ամենաբարձր հարթակում մեր երիտասարդ մասնագետները ներկայացրել են զեկույց՝ «Ոչ բոլոր նեկրոզավոր գրանուլոմաներն են պայմանավորված տուբերկլոզով. Կրոնի հիվանդություն» թեմայով:

Բարդ կլինիկական դեպքի վարման տակտիկական միջազգային փորձագետների կողմից բարձր գնահատականի է արժանացել:

Համալսարանական հիվանդանոցի համար կարևոր է մեր երիտասարդ մասնագետների մասնակցությունը միջազգային հեղինակավոր կոնֆերանսին և մեր երկրի բժշկության արդյունքները օտարերկրյա փորձագետներին ներկայացնելը:



Հայաստանն առաջին անգամ մասնակցել է IBD LIVE օւլայն կոնֆերանսին

Հանդիպում հանրապետության լավագույն արտաբանների հետ

«Միքայելյան» համալսարանական հիվանդանոցում ամեն հինգշաբթի անցկացվող հանդիպումն այս անգամ միավորել էր հանրապետության լավագույն արտաբաններին:

Բանախոսը ՀՀ ինտերվենցիոնալ սրտաբանության ասոցիացիայի նախագահ, Եվրոպական և ՌՖ-ի սրտաբանության ասոցիացիաների անդամ Շահեն Խաչատրյանն էր, առիթը՝ նրա հեղինակած «Սրտի աթերոսկլերոտիկ հիվանդություններ» գրքի շնորհանդեսը, որի համար ընտրված վայրը պատահական չէր:

Շահեն Խաչատրյանը սրտաբան-վիրաբույժ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Ալեքսանդր Միքայելյանի աշակերտներից է, հոգով, սրտով միքայելյանական, ում հիշողություններում վիրաբուժության ինստիտուտը դրոշմված է որպես մայր կլինիկա: Նա հպարտանում է վիրաբուժության ինստիտուտում իր անցած ուղիով, շեշտում, որ բժշկական սխրանքներ գործելուց բացի՝ սա նաև սերունդ կրթող օջախ է, ընտանիք:

Գրքի շնորհանդեսին Շահեն Խաչատրյանը պատմեց, որ դեռևս Ալեքսանդր Միքայելյանի օրոք սրտաբանական ինչ բացառիկ միջամտություններ էին այստեղ իրականացվում, հիշեց իր ուսուցչին, գործընկերներին. «Այս կամարները շատ հրաշալի մարդկանց են լսել, շատ հրաշալի մարդկանց ուսուցանել»:

Նրա խոսքով՝ պրոֆեսոր Միքայելյանն իր կազմակերպչական և մասնագիտական հմտություններով ստեղծել է մի վիթխարի կենտրոն, որն իր ժամանակին լավագույնն էր տեխնիկական հագեցվածությամբ, մասնագիտական ներուժով, իսկ վերջին տարիներին այն նոր շունչ է առել:

Այնուհետև Շահեն Խաչատրյանը ներկայացրեց «Սրտի աթերոսկլերոտիկ հիվանդություններ» գրքի լույս տեսնելու նախապատմությունը և անհրաժեշտությունը: Հեղինակը շեշտեց, որ այս ձեռնարկն առաջին գիրքն է, որը հայերենով նկարագրում է ներանոթային ինվազիվ մեթոդով թերապիայի եղանակները և արդյունքները: Այն կարող է դառնալ սեղանի գիրք թերապևտների, սրտաբանների, ուսանողների համար՝ բուհական և հետբուհական կրթության շրջանակում:

Շահեն Խաչատրյանի խոսքով՝ ձեռնարկում տեղ են գտել սրտի և խոշոր անոթների աթերոսկլերոտիկ բնույթի հիվանդությունների էթիոլոգիաների, պաթոգենեզի, կլինիկական նշանների, կլինիկո-լաբորատոր և գործիքային հետազոտությունների, բուժման ժամանակակից եղանակների և մեթոդների մասին մանրամասն տվյալներ, ներկայացված են ժամանակակից համաշխարհային բժշկության ցուցումները և հետազոտությունների արդյունքները, վիճակագրական տվյալներ, իլյուստրացիաներ, աղյուսակներ:

Գրքի շնորհանդեսին ներկա էին բազմաթիվ հյուրեր՝ ԵՊԲՀ հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Գառնիկ Ավետիսյանը, Հայաստանի սրտաբանների ասոցիացիայի նախագահ, ՀՀ ԱՆ խորհրդատու սրտաբանության գծով, ԵՊԲՀ մասնագիտական և շարունակական կրթության կենտրոնի սրտաբանության ամբիոնի վարիչ Համլետ Հայրապետյանը, «Հերացի» համալսարանական հիվանդանոցի ընդհանուր և ինվազիվ սրտաբանության բաժանմունքի ղեկավար, բժշկական բուհի սրտաբանության ամբիոնի վարիչ Համայակ Միսակյանը, «Նորք Մարաշ» ԲԿ տնօրեն, ԵՊԲՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Միքայել Ադամյանը, բժիշկներ, ուսանողներ, այլք:

Հայաստանի սրտաբանների ասոցիացիայի նախագահ, ՀՀ ԱՆ խորհրդատու սրտաբանության գծով Համլետ Հայրապետյանը, ով գրքի գրախոսներից է, կարևորեց հայալեզու գիտակրթական գրականության առկայությունը և հասանելիությունը: Նա շեշտեց, որ այս գիրքն ուղղված է լրացնելու այն բացը, որն առկա է տարիներ շարունակ սրտաբանության գիտական գրականության, դասագրքերի շրջանում: Գիրքը, ըստ Հայրապետյանի, արժեքավոր է նաև արդիականությամբ, և այն անպայման պետք է ընթերցել:

Միքայել Ադամյանը նշեց, որ բեմ է բարձրացել որպես Շահեն Խաչատրյանի աշակերտ, ուսանող, մարդ, ում կյանքում գրքի հեղինակը մեծ դեր է ունեցել: «Ես հպարտ եմ լինել Շահեն Նորայրովիչի աշակերտը: Գնահատեք Ձեր ուսուցիչներին, չմոռանաք և չուրանաք նրանց արած աշխատանքը», - դահլիճում նստած երիտասարդ մասնագետներին դիմելով՝ ասաց նա:

Համայակ Միսակյանը ևս շնորհավորեց և շնորհակալություն հայտնեց գրքի համար, նա կարևորեց հայերեն նման գիրք հրատարակելու հեղինակի նախաձեռնությունը և երիտասարդ սերնդին կրթելու ցանկությունը:

Գրքի շնորհանդեսին ներկաները ծաղկեպսակ դրեցին հիվանդանոցի հիմնադիր Ալեքսանդր Միքայելյանի հուշարձանի առջև:



ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ



Համալսարանական մասնագետները մեթոդաբանական և գործնական օգնություն են ցուցաբերում մարզային հիվանդանոցներին:

ԵՊԲՀ վիրաբուժության թիվ 1 ամբիոնի վարիչ, «Միքայելյան» համալսարանական հիվանդանոցի վիրաբուժության կլինիկայի ղեկավար, ընդհանուր վիրաբույժ, բ.գ.դ., պրոֆեսոր Սուրեն Ստեփանյանը նշում է, որ այդ օգնությունն արտահայտվում է տարբեր ձևերով, որոնցից առաջնայինը և կարևորը մարզային հիվանդանոցների մասնագետների մասնագիտացումը և վերապատրաստումներն են:

Մարզային վիրաբույժներն անցնում են լապարասկոպիայի մասնագիտացում վիրաբուժության թիվ 1 ամբիոնում և տարբեր ծրագրերով մեկամսյա վերապատրաստման դասընթացներ:

Մասնագիտացումների և վերապատրաստումների ընթացքում նրանք մասնակցում են «Միքայելյան» համալսարանական հիվանդանոցի վիրաբուժության կլինիկայի աշխատանքներին, տեսական և գործնական աշխատանքի փորձ են ձեռք բերում:

Վիրաբուժության թիվ 1 ամբիոնի կլինիկական օրդինատուրայի շրջանավարտները համալրում են մարզային հիվանդանոցների, ինչպես նաև՝ բանակի վիրաբուժական ծառայությունները և պատվով կատարում իրենց պարտքը:

Հիվանդանոցի ընդհանուր վիրաբուժության ծառայության ղեկավար պրոֆ. Ս.Ա. Ստեփանյանը և առաջատար մասնագետներ Հ.Հ. Եղիազարյանը, դոցենտ Ա.Ա. Օհանյանը, Ա.Յու. Ալեքսանյանը, Հ.Ս. Վարդանյանը, Ֆ.Ֆ. Մելքոնյանը, Հ.Հ. Սաֆարյանը, Հ.Հ. Շմավոնյանը, Խ.Հ. Այվազյանը, Դ.Վ. Կիրակոսյանը և մյուսները գործնական օգնություն են ցուցաբերում մարզային հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքներին տարբեր մեթոդներով, ինչպես օրինակ՝ այդ հիվանդանոցներում լապարասկոպիկ վիրահատությունների մեթոդը ներդնելը և սովորեցնելը, բարդ վիրահատությունների իրականացումը, խորհրդատվական օգնությունը, տեսական ժամանակ այդ հիվանդանոցներում աշխատելը, խնդրահարույց պացիենտներին համալսարանական հիվանդանոց տեղափոխելը և հետագա բուժումը կազմակերպելը:



ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՑԱԾ ՈՐՂԻՆ ԱՐՄԵՆԱԿ ԷՆՖԵՆՉՅԱՆԸ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆ Է ՀԱՄԱՐՈՒՄ




«Բլից հարցազրույցներ» շարքի շրջանակում այս անգամ գրուցել ենք ԵՊԲՀ կոլոպրոկտորգիայի ամբիոնի դոցենտը, «Միքայելյան» համալսարանական հիվանդանոցի կոլոպրոկտորգիայի ծառայության ղեկավար Արմենակ Էնֆենչյանի հետ: «Բլից հարցազրույցներ» շարքի շրջանակում այս անգամ գրուցել ենք ԵՊԲՀ կոլոպրոկտորգիայի ամբիոնի դոցենտը, «Միքայելյան» համալսարանական հիվանդանոցի կոլոպրոկտորգիայի ծառայության ղեկավար Արմենակ Էնֆենչյանի հետ:

- Ինչպիսի մանուկ էր Արմենակ Էնֆենչյանը Ձեր հիշողություններում, հարազատների պարմելով:
- Չար, ինքնուրույն, բայց նաև՝ մեծերին լսող և հարգող:
- Երբ եք նվազագույն գնահատական ստացել և ի՞նչ ատարկայից:
- «Ֆիզիկայից» և «Հայոց լեզվից»:
- Դպրոց՝ ծնող ինչի՞ համար են կանչել:
- Դասից փախչելու համար: Դասարանով փախել ենք, գնացել «Մոսկվա» կինոթատրոն՝ «Ֆանտոմաս» ֆիլմը նայելու:
- Ձեր օրը երբ և ինչպե՞ս եք սկսում:
- Օրս սկսվում է ժամը 6.00-ից՝ սովորական ձևով:
- Իր, որը միշտ Ձեզ հետ է:
- Հեռախոսը և բանալիները:
- Ամենակարևոր ձեռքբերումը...
- Մասնագիտությանս ընտրությունը և անցած ուղին:
- Պարտությունը...
- Պրոկտոլոգիայի ինստիտուտի լուծարումը:

- Ումի՞ց եք հիասթափվել:
- Հիասթափվելու պատճառներ, ցավոք, շատ կան, բայց ես դա օրինաչափ եմ համարում:
- Ինչն է Ձեզ հուսահարեցնում:
- Անորոշությունը, որը կապված է մեր երկրի ապագայի հետ...
- Ինչը կհատրթի կյանքում հերոսին, եթե չլինեին...
- Կինս ու գինին չեն կարող հաղթել: Հաղթել կարելի է միայն հավատով:
- Ինչն է զայրացնում Արմենակ Էնֆենչյանին, և ամենազայրացած պահին ինչ կարող եք անել:
- Ես հանգիստ մարդ եմ, եթե չգովեմ: Փորձում եմ լինել հանգիստ, որպեսզի չբարկանամ:
- Հայելու առաջ... ինչպե՞ս կրնոթագրեք Ձեզ:
- Ես ինձ ինչպե՞ս կարող եմ բնութագրել: Հայելու առաջ չեմ կանգնում, նարցիսիզմով չեմ տառապում:
- Ինչ թերություններ ունեք:
- Շատ արագ եմ հավատում

- մարդկանց և հիասթափվում եմ:
- Ինչ մեղքեր, սխալներ եք գործել:
- Եթե կարծում եմ, որ մեղք ունեմ, մոմ եմ վառում եկեղեցում:
- Ինչը կարող է զարմացնել Ձեզ:
- Արդեն ոչինչ ինձ չի զարմացնում:
- Եթե նորից ծնվեիք, ինչ կփոխելիք Ձեր կյանքում...
- Երևի թե ոչինչ:
- Լավագույն ընկերը...
- Ունեմ լավագույն ընկերներ:
- Եթե հանդիպեիք Աստուծո՞ւ, ինչ կհնարեիք:
- Ձեմ պատկերացնում այդ հանդիպումը:
- Թերթում ենք ձեր հիշողությունների գիրքը, որն է Ձեր ամենատարախ և ամենաարխտր օրը:
- Ամենատարախ օրը՝ գիտական պաշտպանությանս օրը, իսկ ամենաարխտրը հարազատներիս կորստի հետ է կապված:
- Ինչ է թաքցնում Արմենակ Էնֆենչյանը:
- Եթե թաքցնում եմ, էլ ինչո՞ւ ասել:
- Տասին գործերում ինչպե՞ս եք օգնում ընտանիքին:
- Տանը մանր-մունր վերանորոգման աշխատանքներ անելով:
- Հորբիներ ունեք:
- Այո, ձկնորսություն:
- Տարօրինակ սովորություն...
- Ճշմարտությունը ասել:
- Ինչ չեք անի երբեք:
- Չեմ դավաճանի:
- Քչերը գիտեն, որ դուք...
- Հանգիստ ու զուսպ մարդ եմ:
- Իրադարձություն, որը փոխել է Ձեր կյանքը:
- Իմ կյանքը փոխվեց Հայաստանի անկախությունից հետո:
- Գիրք, որը մեծ ազդեցություն է թողել Ձեզ վրա:
- Ալեքսանդր Թամանյանի կյանքի, գործունեության մասին գիրքը:
- Շարքի նախորդ մասնակիցը՝ Ջարուհի Գևորգյանը, Ձեզ հարցնում է՝ ինչ է երջանկությունը:
- Ատողությունը, խաղաղությունը և լավ տրամադրությունը:
- Ձեր հարցը շարքի հաջորդ մասնակցին:
- Ինչ կփոխեիք Ձեր կյանքում:

ԽԱՉԲԱՌ



Իրաչառը կապուկ է
«Վրիպյեյան» համալսարանական
հիվանդանոցի անոթային վիրաբույժ
Հրիբո Փալարյանը:

Նախորդ՝ N 3-4
(1448-1449) համարում
տեղ գտած իրաչառի
պատասխանները.

1. պերիտոնիտ
2. հեմոգլոբին
3. Մակկոկորո
4. Աբսցես
5. կրոն
6. Նեֆրոլոգ
7. միտրալ
8. ասցիտ
9. ինտուբացիա
10. սատուրացիա

Հորիզոնական

3. Անոթի լուսանցքի 50% և ավել լայնացումը կոչվում է...

5. Հեմատոլոգիական համակարգային հետազոտություն, որը գնահատում է արյան մակարդեղիության ցուցանիշները:

7. Վերին և ստորին միջընդերային զարկերակներից առաջացող աղեղի անվանումը:

9. Աջ և ձախ ընդհանուր զստային երակների միացումից գոյացող անոթի անվանումը:

10. Մանրագույն անոթներ, որոնք կատարում են նյութափոխանակություն՝ արյան և հյուսվածքների միջև:

Ուղղահայաց

1. Առաջանում է արյունատար անոթների վնասման ժամանակ՝ արյան կուտակմամբ հյուսվածքներում պլստահարող հիվանդություն:

2. Արյունատար անոթներ, որոնք մարմնի բոլոր հյուսվածքներից և օրգաններից արյուն են բերում դեպի սիրտ:

4. Այդ անոթները մեր օրգանիզմը մատակարարում են թթվածնով հարուստ արյուն:

6. Օրգանիզմի մայր զարկերակ:

8. Արյան մակարդուկ, որն առաջանում է անոթի լուսանցքում

Փունջ մը ժպիտ

Պացիենտը մոտենում է սենյակիս, այդ պահին տեղում չեն լինում: Նրա վիճակը կտրուկ վատանում է, ուշաթափություն, ականա միզարձակություն, դեֆեկացիա, փսխում: Ռեանիմատոլոգը առաջին բուժօգնություն է ցուցաբերում, երբ հասնում են և սկսում հետաքրքրվել, թե ով ունի եղբոր համարը, որպեսզի զանգեն և տեղեկացնեն հոսպիտալացման մասին, պարզվում է՝ հենց ես էլ ունեմ: Զանգում եմ այդ համարով, մեկ էլ ուշաթափված պացիենտը վերցնում է, թե՛ դոկտոր ջան, ինձ եք զանգել:



Առօրյայից դեպքը պատմեց «Միքայելյան»
համալսարանական հիվանդանոցի
գասարունսրերոյոգ-հեպատոլոգ
ԷԴՄՈՆԴ ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆԸ

ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՀԱՎԱԿՆՈՑ ԾՐԱԳՐԵՐԸ

Հանրային առողջության մասնագետը կարող է լուծումներ առաջարկել, տեսնել այնպիսի խնդիրներ, որոնք հասանելի չեն այլ նեղ մասնագիտացում ունեցող բժիշկներին:

Այս համոզմանն է ԵՊԲՀ հանրային առողջության ֆակուլտետի շրջանավարտ Էմմա Թադևոսյանը, որն ապագայի մեծ ծրագրեր ունի:

«Քանի որ ընտանիքիս անդամներն աշխատում էին հիվանդանոցում, և մանկուց շատ էի այցելում նրանց, այլ տարբերակ, բացի բժշկի մասնագիտությունից, նույնիսկ մտքիս ծայրով չի անցել, ես վստահ էի, որ դա է իմ ճանապարհը», - նշում է բժշկական բուհի շրջանավարտը:

Անկեղծանում է, որ միշտ երազել է դառնալ պատասխան, քանի որ այս մասնագիտությունը հիմնականում հստակ պատասխաններ է տալիս, ինչն իրեն շատ հոգեհարազատ էր:

«13 տարեկանում, ստանալով օրթոդոնտիկ բուժում, կտրուկ մտափոխվեցի մասնագիտության հարցում և կանգ առա ստոմատոլոգիայի վրա: Ավարտելով դպրոցական հիմնական կրթությունը՝ ընդունվեցի քոլեջ՝ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ, այնուհետև՝ բժշկական համալսարան և ստացա բժիշկ-ստոմատոլոգի որակավորում: Ջուզահեռ ուսումնառության բոլոր տարիներին՝ միշտ ունեցել եմ աշխատանք, այդ թվում՝ նաև մասնագիտական և ակտիվ ներգրավված եմ եղել հասարակական գործունեության մեջ, ինչն անչափ կարևորում եմ պրոֆեսիոնալ դառնալու հարցում», - ընդգծում է Էմմա Թադևոսյանը:

Աշխատելով ստոմատոլոգիական ոլորտում՝ հասկացել է, որ միայն պացիենտներին ընդունելը և գեղեցիկ ժպիտ պարզակերպ իրեն չի տալիս լիարժեքության զգացում, այդ ընթացքում նաև դասավանդել է ԵՊԲՀ քոլեջում:

Երկար մտածելուց և որոշակի ուսումնասիրություններ կատարելուց հետո՝ 2017 թվականին, դիմել է բժշկական բուհի հանրային առողջության ֆակուլտետ, որը համարում է իր լավագույն որոշումներից մեկը:

«Պատճառներից գլխավորն այն էր, որ տվյալ մասնագետը կարող է լուծել և դիտարկել այնպիսի առողջապահական խնդիրներ, որոնք հասանելի չեն նեղ մասնագիտացում ունեցող բժշկին՝ չնայած նրան, որ մեր երկրում կան այնպիսի բժիշկներ, որոնք նաև փայլուն կառավարիչներ են»:

Երիտասարդ բժիշկը նշում է, որ ուսումնառության ընթացքում իրենց դասավանդել են և բուհի դասախոսները, և հրավիրվածներ, ինչն անչափ կարևոր է, քանի որ նրանք հիմնականում աշխատում են միջազգային կամ պետական կառույցներում:

«Ինձ շատ ուրախացնում էր այն փաստը, որ ի տարբերություն այլ ֆակուլտետների՝ քննությունները նաև հետազոտական աշխատանքների, նախագծերի միջոցով են անցկացվում: Այդպիսով, ուսանողը զարգացնում էր իր խոսքը և մտքի ճկունությունը: Ի դեպ՝ ես ընդունվել էի վճարովի հիմունքով, քանի որ իմ թվով 2-րդ մագիստրատուրան էր, իսկ հետագայում ռոտացիոն համակարգով ստացա անվճար ուսանելու հնարավորություն», - ասում է Էմմա Թադևոսյանը, ով հպարտ է, որ իրեն բախտ է վիճակվել բժշկական մայր բուհում սովորել և սովորեցնել:

Նա 2019 թվականին ավարտել է հանրային առողջության ֆակուլտետում ուսումնառությունը, հիմա աշխատում է «Սիթի օֆ Սմայլ» բարեգործական հիմնադրամում՝ բժշկական հարցերի համակարգող:

«2020 թվականին պրոֆեսոր Յոլյանի անվան արյունաբանության կենտրոնում ձևավորվել է ոսկրածուծի պոզիտիվ փոխապատվաստման թիմ, որի անդամ եմ նաև ես: Աշխատում եմ նաև Արյունաբանության կենտրոնի ոսկրածուծի փոխապատվաստման բաժանմունքում՝ որպես որակի վերահսկման պատասխանատու: Իմ աշխատանքի և հիմնադրամի գործունեության մասին պատմելու հնարավորություն ունեցա միջազգային կարևոր հարթակներում, նաև հնարավորություն ունեցա այցելել եվրոպական հայտնի բժշկական կենտրոններ, ինչն անչափ կարևորում եմ զարգացման գործում», - նշում է Էմման, ում նպատակներից է մանկական քաղցկեղի բուժման արդյունավետության և իրազեկվածության բարձրացումը Հայաստանում՝ չնայած զարգացող երկրի համար մեր երկրի ցուցանիշը բուժման արդյունավետության առումով բավականին բարձր է՝ մոտ 70%:

Ծրագրում է նաև աշխարհի հեղինակավոր ուսումնական հաստատությունում կատարել հանրային առողջության ոլորտում նեղ մասնագիտացման ուսումնասիրություն, որոնցից մեկն է Patient Advocacy (պացիենտի իրավունքների պաշտպանություն):



ԹԵՐՄՆՈՒՑՄԱՆ ԵՎ ՃԱՐՊԱԿԱԼՄԱՆ ԿՐԿՆԱԿԻ ԲԵՌԸ

Հայտնի միջազգային “The Lancet” պարբերականում վերջերս հրատարակված նյութի համաձայն՝ աշխարհում այժմ 1 միլիարդից ավելի մարդ ապրում է «ճարպակալում» ախտորոշմամբ: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ, չնայած թերսնուցման մակարդակի նվազմանը, այն ևս շարունակում է մնալ հանրային առողջության խնդիր տարբեր տարածաշրջաններում, հատկապես՝ Հարավարևելյան Ասիայում և Հարավսահարայան Աֆրիկայում:

Ըստ ԱՀԿ մասնագետների գնահատականների՝ 2018-ին 820 միլիոն մարդ ունեցել է սննդի հասանելիության խնդիր՝ նախորդ տարվա 811 միլիոնի համեմատ:

Միևնույն ժամանակ, ի լրումն այս մարտահրավերների՝ գերքաշության և ճարպակալման ցուցանիշները շարունակում են աճել ամենուր, հատկապես՝ դպրոցահասակ երեխաների և մեծահասակների շրջանում:

Ճարպակալումը քրոնիկ բարդ հիվանդություն է, որը բնութագրվում է մարմնի ավելորդ զանգվածով, այն կարող է հանգեցնել 2-րդ տիպի շաքարային դիաբետի, սրտանոթային համակարգի հիվանդությունների ռիսկի մեծացման, կարող է ազդել հենաշարժական և վերարտադրողական համակարգերի վրա, մեծացնել քաղցկեղի որոշ տեսակների ռիսկը: Ճարպակալումը ազդում է կյանքի որակի վրա, մասնավորապես՝ քնի և շարժունակության վրա:

Մարմնի հավելյալ քաշի և ճարպակալման ախտորոշումը կատարվում է մարդկանց քաշի և հասակի չափման և մարմնի զանգվածի ինդեքսի (BMI) հաշվարկման միջոցով՝ քաշ(կգ)/հասակ² (մ²): Ճարպակալումը որոշելու համար BMI-ի կատեգորիաները տարբերվում են՝ կախված նորածինների, երեխաների և դեռահասների տարիքից և սեռից:

Համաձայն ՅՈՒՆԻՍԵՖ-ի՝ «Կենտրոնական Եվրոպայում և Ասիայում դպրոցահասակ երեխաների սննդակարգի» հետազոտության՝ Հայաստանում 10-24 տարեկան յուրաքանչյուր 4-րդ դեռահաս ավելորդ քաշ կամ գերքաշություն ունի: Տղաների և աղջիկների միայն կեսն է ամեն օր միրգ ու բանջարեղեն օգտագործում:

Ավելին՝ Հայաստանում դեռահաս աղջիկների 56%-ը, իսկ տղաների 50%-ն ամեն օր քաղցր է ուտում, ինչը Կենտրոնական Եվրոպայի և Ասիայի տարածաշրջանի մյուս երկրների համեմատ ամենաբարձր ցուցանիշն է: Եվ սրան զուգահեռ՝ մեր դեռահասների միայն 23%-ն է օրական 60 րոպե ֆիզիկապես ակտիվ լինում:

Հետաքրքիր փաստեր ճարպակալման և ցածր քաշի վերաբերյալ՝

2022 թվականին աշխարհում 8 մարդուց 1-ի մոտ ճարպակալում է ախտորոշվել:

1990 թվականից ի վեր ամբողջ աշխարհում մեծահասակների շրջանում ճարպակալման դեպքերի թիվն ավելի քան կրկնապատկվել է, իսկ դեռահասների շրջանում՝ քառապատկվել:

2022 թվականին 2,5 միլիարդ մեծահասակ (18 տարեկան և բարձր) ավելորդ քաշ է ունեցել: Նրանցից 890 միլիոնի մոտ ամկա է եղել ճարպակալում, իսկ 390 միլիոնը ունեցել է ցածր քաշի խնդիր:

2022 թվականին 18 տարեկան և բարձր տարիքի մեծահասակների 43%-ն ավելորդ քաշ է ունեցել, իսկ 16%-ի մոտ գրանցվել է ճարպակալում:

2022 թվականին մինչև 5 տարեկան 37 միլիոն երեխա ավելորդ քաշ է ունեցել, իսկ 149 միլիոնը հասակի աճի և զարգացման խնդիր է ունեցել:

2022 թվականին 5-19 տարեկան ավելի քան 390 միլիոն երեխա և դեռահաս ավելորդ քաշ են ունեցել, այդ թվում՝ 160 միլիոնի մոտ ճարպակալում է արձանագրվել:

Մինչև 5 տարեկան թերսնուցված երեխաների քանակը (իրենց հասակի համար ցածր քաշ ունեցող) 49.5 միլիոն է:

Ցածր քաշով ծնված երեխաների թիվը կազմել է 20.5 միլիոն:

2022 թվականին ցածր քաշի և ճարպակալման ամենաբարձր համակցված ցուցանիշներով երկրները եղել են Խաղաղ օվկիանոսի և Կարիբյան ավազանի կղզային պետությունները, ինչպես նաև՝ Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրները:

«Նորագույն ուսումնասիրությունը կարևորում է ճարպակալման կանխարգելման և դրա դեմ պայքարի կարևորությունը վաղ տարիքից մինչև հասունություն՝ առողջ սննդակարգի, ֆիզիկական ակտիվության և պատշաճ խնամքի միջոցով, ըստ անհրաժեշտության», -ասում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության գործադիր տնօրեն Թեդրոս Գեբրեյեսուսը:

«Ճարպակալման դեմ պայքարի և թերսնուցման վերացման գործալ նպատակներին հասնելը կպահանջի կառավարությունների և համայնքների մեծածավալ աշխատանք՝ ԱՀԿ-ի և հանրային առողջապահության ազգային հաստատությունների գիտականորեն հիմնավորված քաղաքականության աջակցությամբ: Կարևոր է նշել, որ սա պահանջում է նաև մասնավոր հատվածի հետ համագործակցություն, որը պետք է պատասխանատու լինի իր արտադրանքի՝ առողջության վրա հնարավոր ազդեցության համար»:



ԵՐԻԿԱՄՆԵՐԻ ՔՐՈՆԻԿ ՀԻՎԱՆՌՈՒԹՅՈՒՆ

Երիկամների համաշխարհային օրը գլոբալ առողջապահական իրազեկման արշավ է, որն ուղղված է երիկամների առողջության կարևորության վերհանմանը և երիկամների հիվանդության և դրա հետ կապված առողջական խնդիրների հաճախականության ու հետևանքների նվազեցմանն ամբողջ աշխարհում:

Երիկամների համաշխարհային օրը նշվում է ամեն տարի՝ մարտի 2-րդ հինգշաբթի օրը: Այս տարի այն նշվեց մարտի 14-ին՝ «Երիկամների առողջություն բոլորի համար» խորագրի ներքո:

Երիկամների քրոնիկ հիվանդությունն ազդում է ավելի քան 850 միլիոն մարդու վրա ամբողջ աշխարհում, այն 2019 թվականին հանգեցրել է ավելի քան 1.3 միլիոն մահվան:

Ներկայումս երիկամների հիվանդությունները մահվան պատճառների շարքում զբաղեցնում են 8-րդ տեղը, իսկ 2000 թվականին այն եղել է 13-րդ տեղում, և եթե համապատասխան միջոցներ չձեռնարկվեն, կանխատեսվում է, որ մինչև 2040 թվականը երիկամային հիվանդությունները կդառնան կյանքի կորստի 5-րդ հիմնական պատճառը:

Վերջին երեք տասնամյակի ընթացքում երիկամների քրոնիկ հիվանդությունների բուժման ջանքերը կենտրոնացել են երիկամ-փոխարինող թերապիայի տարբերակների՝ հեմոդիալիզի, պերիտոնեալ դիալիզի և երիկամի փոխպատվաստման, նախապատրաստման և դրանց իրականացման վրա: Վերջին թերապիայի առաջընթացն աննախադեպ հնարավորություններ է ստեղծում հիվանդությունը կանխելու կամ հետաձգելու և այնպիսի բարդությունների հետևանքները մեղմելու համար, ինչպիսիք են՝ սրտանոթային հիվանդությունները և երիկամային անբավարարությունը՝ ի վերջո երկարացնելով երիկամների քրոնիկ հիվանդությամբ ապրող մարդկանց կյանքի որակը և տևողությունը:

Չնայած բուժման նոր և ժամանակակից մեթոդները պետք է համընդհանուր հասանելի լինեն բոլոր պացիենտների համար՝ բազմաթիվ երկրներում առկա են այնպիսի խոչընդոտներ, ինչպիսիք են՝ հիվանդացության մասին իրազեկվածության պակասը, նոր թերապիայի ռազմավարության վերաբերյալ գիտելիքի կամ վստահության պակասը, երիկամաբանների սակավությունը և բուժման ծախսերը: Այս ամենը նպաստում է բուժման մատչելիության խորը անհավասարության, հատկապես՝ ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում: Այս անհավասարությունն էլ հիմք է հանդիսանում ամեն տարի հանրության և մասնագետների ուշադրությունը կենտրոնացնել երիկամային հիվանդությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման և առողջապահության ոլորտի աշխատողների կատարելագործման վրա:

Երիկամների հիմնական աշխատանքն արյան մեջ տոքսինների և ավելորդ ջրի հեռացումն է:

Երիկամները նաև օգնում են վերահսկել արյան ճնշումը, արտադրել արյան կարմիր քջիջներ և պահպանել ոսկորների առողջությունը:

Մոտավորապես բոունքքի չափի երիկամները տեղակայված են որովայնի խորքում՝ կողոսկրի տակ:

Երիկամները վերահսկում են արյան մեջ շատ սննդարար նյութերի մակարդակը՝ ներառյալ նատրիումը և կալիումը և օգնում են վերահսկել արյան թթվայնությունը: Ամեն օր երիկամները վերահսկում են մարմնի աղի և ջրի պարունակությունը, որպեսզի արյան ճնշումը մնա անփոփոխ:

7 կարևոր խորհուրդ երիկամների քրոնիկ հիվանդությունների կանխարգելման համար՝

- պահպանել լավ մարզավիճակ և խուսափել նստակյաց ապրելակերպից,
- սնվել առողջ և բալանսավորված,
- ստուգել և վերահսկել արյան մեջ շաքարի մակարդակը,
- ստուգել և պահպանել արյան ճնշման մակարդակը,
- խմել համապատասխան քանակության հեղուկ (8 բաժակ, օրական գրեթե 2 լիտր),
- ձեռնպահ մնալ ծխախոտ օգտագործելուց,
- խուսափել ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղերի կանոնավոր օգտագործումից:



ՄԱՐՏԸ՝ ԿՈՆՈՒԵԿՏԱԼ ՔԱՂՑԿԵՂԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱՄԻՍ

ՄԱՐՏԸ՝ ԿՈՆՈՒԵԿՏԱԼ ՔԱՂՑԿԵՂԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱՄԻՍ
ՍՔՐԻՆԻՆԳԸ ԿՅԱՆՔԵՐ Է ՓՐԿՈՒՄ



ՆՎԱԶԵՑՐԵՔ ԿՈՆՈՒԵԿՏԱԼ ՔԱՂՑԿԵՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ՝

- ▶ ՀԵՏԱԶՈՏՎԵՐՔ
- ▶ ԽՈՒՍԱՓԵՔՔ ԱՎՈՂՈՒՄ ԾԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՄԻ՝ ԾԻԵՔ
- ▶ ՅԻԶԻԿԱՊԵՍ ԱԿՏԻՎ ԵՂԵՔ
- ▶ ԾԳՏԱԳՈՐԾԵՔ ԲԱԶՄԱԳՈՒՅՆ ՍՆՈՒՆԴ՝ ՄԻՐԳ ԵՎ ԲԱՆՁԱՐԵՂԵՆ
- ▶ ԽՈՒՍԱՓԵՔ ԱՊՈՒՏԱԾ ՄԱՍԻՑ ԵՎ ԶԿԵՆԵՂԵՒՑ ՀԱԳԵՑՑԱԾ ԶԱՐԳԵՐՈՎ ՀԱՐՈՒՄՑ, ՎԵՐԱՄԵԱԿՎԱԾ ՄԹԵՐՔԵՆԵՐԻՑ
- ▶ ՆՎԱԶԵՑՐԵՔ ԿԱՐՄԻՐ ՄՍԻՐ ԾԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

2024 թվականի մարտ ամիսը կոլոնեկտալ քաղցկեղի իրագրելման ամիս էր հայտարարված ամբողջ աշխարհում: Մաշտ լավ առիթ էր՝ հիվանդացության մասին բարձրաձայնելու, մարդկանց իրազեկվածությունը հիվանդության, դրա վաղ հայտնաբերման, կանխարգելման և բուժման մասին բարձրացնելու համար:

Կոլոնեկտալ քաղցկեղը չարորակ նորագոյացությունների շարքում ըստ տարածվածության երրորդ տեղում է ամբողջ աշխարհում: Կոլոնեկտալ քաղցկեղի վիճակագրությունը համեմատաբար հասանելի է, քանի որ այն հիմնականում հայտնաբերվում է նախաքաղցկեղային, թաքնված, վաղ և բուժելի փուլերում: Կոլոնեկտալ քաղցկեղի սրբինինգի համար կարող են օգտագործվել ուղղակի կամ անուղղակի թեստեր: Հիվանդությունը մեծ մասամբ ախտորոշվում է 60 և բարձր տարիքի անձանց մոտ:

Սրբինինգային ծրագրերի մեծ մասը բաժին է ընկնում 50-75 տարեկան անձանց: Սրբինինգը կարող է նվազեցնել հիվանդության մահաբերությունը՝ ավելի վաղ փուլերում հայտնաբերելով նախաքաղցկեղային պոլիպները, որոնք հետագայում կարող են հետագվել: Վերահսկվող փորձարկումներում պարզվել է, որ կղանքում թաքնված արյան թեստը նվազեցնում է կոլոնեկտալ քաղցկեղից մահացությունը:

13-33%-ով: Կոլոնոսկոպիկ հետազոտությունները ցույց են տվել դեպքերի 18% նվազում, իսկ կոլոնեկտալ քաղցկեղից մահացությունների՝ 28% նվազում:

Կոլոնեկտալ քաղցկեղը համաշխարհային խնդիր է. տարեկան գրանցվում է ավելի քան 1.3 միլիոն նոր դեպք և գրեթե 700.000 մահ: Հիվանդացության ցուցանիշներն ավելի բարձր են արևմտյան երկրներում, օրինակ՝ Մեծ Բրիտանիայում և Ամերիկայում այն տղամարդկանց մոտ՝ թոքերի և շագանակազեղծի քաղցկեղից և կանանց մոտ՝ թոքերի և կրծքազեղծի քաղցկեղից հետո երրորդ ամենատարածված ախտորոշված քաղցկեղն է: Կոլոնեկտալ քաղցկեղի զարգացման ռիսկը յուրաքանչյուր մարդու մոտ ամբողջ կյանքի ընթացքում կազմում է մոտ 5%, չնայած՝ տղամարդկանց և կանանց միջև կան փոքր տարբերություններ:

Կոլոնեկտալ քաղցկեղի դեպքերը վերջին տարիներին աճում են մասամբ բնակչության ծերացման պատճառով: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը դեռևս 1968 թվականին թողարկել է սրբինինգային թեստերի ուղեցույցներ:

Սրբինինգը կարող է իրականացվել ուղղակի էնդոսկոպիկ կամ ճառագայթային ընթացակարգերի կամ անուղղակի միջոցների տեսքով, ինչպես օրինակ՝ կղանքի հետազոտությունը:

Սրբինինգային ծրագրերի մշակման մոտեցումը տարբեր է ամբողջ աշխարհում և հիմնականում պայմանավորված է ծախսերի և ռեսուրսների սահմանափակումներով, ինչպիսիք են՝ էնդոսկոպիկ բաժանմունքի թողունակությունը: Որոշ երկրներում սրբինինգը կատարվում է որպես սովորական կլինիկական ծառայությունների մաս, իսկ մյուս երկրներում կա առանձին սրբինինգային ծառայություն, որը հաճախ ունի որակի ավելի հուսալի երաշխիք:

Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականի հուլիսից ներդրվել է կոլոնեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերման սրբինինգային փորձարարական ծրագիրը Երևանի և Գյումրու մեկական բուժհաստատություններում: Ծրագրի նպատակն է բնակչության 50-75 տարիքային խմբում հիվանդության կանխարգելումը և վաղ հայտնաբերումը: Ծրագիրը կշարունակվի մինչև 2026-ը:

Սրբինինգն իրականացվում է կղանքի մեջ թաքնված արյան հայտնաբերման մեթոդով, ինչից հետո պացիենտները ստանում են մասնագետի խորհրդատվություն: Անհրաժեշտության դեպքում նշանակվում է կոլոնոսկոպիա, իսկ քաղցկեղի հայտնաբերման դեպքում պացիենտներն ուղեգրվում են հետագա բուժման:

2015-2016թթ. Հայաստանի Հանրապետությունում կոլոնեկտալ քաղցկեղով հիվանդացության ցուցանիշը 100.000 բնակչության հաշվով կազմել է 24.1 և 25.2, իսկ մահացությունը՝ 17.6 և 16.9՝ համապատասխանաբար: 2015- 2016թթ. ՀՀ-ում արձանագրվել է կոլոնեկտալ քաղցկեղով հիվանդացության 726 և 758 դեպք: Հիվանդացության ամենաբարձր ցուցանիշները (81%) արձանագրվել են 49-79 տարիքային խմբում: Չափազանց բարձր է ուշ հայտնաբերված դեպքերի թիվը, մասնավորապես՝ 2021 թվականին կոլոնեկտալ քաղցկեղի շուրջ 70.9%-ը, հայտնաբերվել է հիվանդության 3-րդ և 4-րդ փուլում:

2021-ին հիվանդացության ցուցանիշը ՀՀ-ում կազմել է 25.5՝ 100.000 բնակչի հաշվով կամ 756 դեպք, տարածվածությունը՝ 167.9 (4972 դեպք), իսկ մահացության ցուցանիշը կազմել է 16 կամ 475 դեպք: Դեպքերի 83.6%-ը արձանագրվել է 60 և բարձր տարիքային խմբերում: 2022-ին հիվանդացությունից մահերի թիվը եղել է 517, իսկ ըստ տարեկերքյան տվյալների՝ 5320 քաղաքացու մոտ եղել է հաստատված կոլոնեկտալ քաղցկեղ, որից 826-ը կյանքում առաջին անգամ ախտորոշված պացիենտներն են:

Կոլոնեկտալ քաղցկեղի վաղաժամ ախտորոշման համար օգտագործվող հետազոտության մեթոդներն են.

- Կոլոնոսկոպիա,
- Համակարգչային շերտագրությամբ կոլոնոգրաֆիա, այլ կերպ կոչվում է վիրտուալ կոլոնոսկոպիա,
- Սիգմոիդոսկոպիա. նման է կոլոնոսկոպիային, սակայն այս մեթոդով կարող են հետազոտվել միայն ուղիղ և սիգմայանձն աղիները,
- Կղանքի թաքնված արյան թեստ (ԿԹ-ԱԹ) և կղանքի իմունոքիմիական թեստ (ԿԻԹ),
- ԿԹ-ԱԹ օգտագործվում է կղանքում արյուն հայտնաբերելու համար, ինչը շատ հաճախ լինում է հաստ աղու պոլիպների կամ քաղցկեղի ժամանակ,
- Կրկնակի կոնտրաստային բարիումային իրիգոսկոպիա, այն հիվանդներին, ովքեր չեն կարող ենթարկվել կոլոնոսկոպիային, կարող է արվել բարիում պարունակող կոնտրաստով հոգնա,
- Կղանքի ԴՆԹ թեստավորում. այս թեստի միջոցով հետազոտվում են հիվանդի կղանքի ԴՆԹ-ի փոփոխությունները, որոնք կարող են ի հայտ գալ պոլիպների կամ քաղցկեղի ժամանակ:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՇԽԱՏՈՒՄ Է ՄՈՏ 35 ՄԼՆ ՄԱՐԴ

Բժշկական անձնակազմի աշխատանքային պայմաններին բարելավման և անվտանգության բարձրացման խնդիրը արդի առողջապահության կարևոր հարցերից մեկն է, քանի որ այն ուղղակիորեն ազդում է ոչ միայն իրենց աշխատողների առողջության, այլև բժշկական հաստատությունների որակի, բժշկական օգնություն ցուցաբերելու հնարավորության, և, ընդհանուր առմամբ, որպես հետևանք, հիվանդի առողջության վրա:

Համաձայն գրականության տվյալների՝ համաշխարհային առողջապահության բնագավառում աշխատում է մոտ 35 մլն մարդ, որը կազմում է ամբողջ աշխատող բնակչության 12%-ը: Բժշկության ոլորտի աշխատողները՝ բուժքույրեր, բժիշկներ, լաբորանտներ և այլն, իրենց մասնագիտական պարտականությունները կատարելիս ենթակա են սրածայր գործիքներով վնասման բարձր ռիսկի: Նույնիսկ աննշան վնասվածքը իրենից վտանգ է ներկայացնում վարակիչ հիվանդությունների ավելի քան 20 հարուցիչների փոխանցման առումով:

Բուժաշխատողների համար առավել տարածված և վտանգավոր վարակներն են՝ վիրուսային հեպատիտներ Բ-ն, Ց-ն, ՄԻԱՎ-ը և այլն: ԱՀԿ-ի գնահատմամբ՝ ավելի քան երկու միլիոն առողջապահության աշխատակից ամեն տարի ենթարկվում է սրածայր գործիքներով վնասման, որը պատճառ է դառնում՝

ՎՀԲ-ով վարակման 66.000 դեպքի, ՎՀՑ-ի՝ 16.000 դեպքի, ՄԻԱՎ-ով վարակման մոտ 1000 դեպքի (200-5000), շուրջ 1100 մարդու հաշմանդամության կամ մահվան:

Ի պատասխան դրա՝ ԱՄՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնը հրապարակել է բուժաշխատողի աշխատանքի պաշտպանության սկզբունքները՝ ներառյալ պատվաստումները, վաղ ավտորոշման համար իրականացվող սկրինինգը, անհատական պաշտպանության միջոցների օգտագործումը: Occupational Safety and Health Administration (OSHA)-ի հրապարակած ստանդարտը նպաստել է բուժանձնակազմի շրջանում ՎՀԲ-ով հիվանդացության անկմանը և յուրաքանչյուր տարի թարմացվելով՝ արդյունավետ օգտագործվում է վարակի հետազոտակային կանխարգելման նպատակով:

